# Քաղաքացիներ Արմեն Սուքիասյանին և Անուշ Սուքիասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց թիվ 259/1 /նախկին Երևանյան փողոց թիվ 263 և 261/1 հասցեները միավորվել են/ հասցեում  նախատեսվող արտադրական պահեստի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝  Քաղաքացիներ
Արմեն Սուքիասյան

Անուշ Սուքիասյան

ՏԱՇԻՐ     2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ........ 4
2. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ........ 5
2.1. ՀՀ ազգային օրենսդրությունը ........ 5
2.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին ........ 12
2.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը ........ 15
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ........ 17
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ........ 28
4.1. Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները ........ 28
4.2. Սեյսմիկա և երկրաբանություն ........ 28
4.3. Կլիմա և օդային ավազան ........ 31
4.4. Մթնոլորտային օդ ........ 34
4.5. Աղմուկ և թրթռում ........ 35
4.6. Ջրային ռեսուրսներ ........ 36
4.7. Հողային ռեսուրսներ ........ 38
4.8. Կենսաբազմազանություն ........ 39
4.8.1 Կենդանական և բուսական աշխարհ ........ 39
4.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ ........ 51
4.10. Պատմամշակութային հուշարձաններ ........ 53
4.11. Բնության հուշարձաններ ........ 53
4.12. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ ........ 55
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ........ 59
5.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը ........ 59
5.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ ........ 60
5.3. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը ........ 72
6. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 72
6.1. <<Ոչ մի գործողություն>> այլընտրանքային տարբերակ ........ 72
6.2. Ծրագրի առավելությունները ........ 73
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 74
7.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները ........ 74
7.1.1. Օդային ավազան ........ 74

7.1.2. Ջրային ավազան ....76
7.1.3. Թափոնների կառավարում ....77
7.1.4. Հողային ռեսուրսներ ....78
7.1.5. Կենսաբազմազանություն ....78
7.1.6. Պատմամշակութային միջավայր ....79
7.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ ....79
7.1.8. Աղմուկ և թրթռում ....80
7.2.1. Օդային ավազան ....81
7.2.2. Ջրային ռեսուրսներ ....85
7.2.3. Թափոնների կառավարում ....86
7.2.4. Հողային ռեսուրսներ ....86
7.2.5. Կենսաբազմազանություն ....86
7.2.6. Աղմուկ ....87
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ....87
9. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ....90
10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....91
ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ....92
ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ....
՝-- ՀԱՍՅԵԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Ձեռնարկող | Քաղաքացիներ Արմեն Սուքիասյան և Անուշ Սուքիասյան |
| Ձեռնարկողի էլեկտրոնային հասցե | lorvakat@mail.ru |
| Նախատեսվող գործունեության անվանումը | Քաղաքացիներ Արմեն Սուքիասյանին և Անուշ Սուքիասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց թիվ 259/1 /նախկին Երևանյան փողոց թիվ 263 և 261/1 հասցեները միավորվել են/ հասցեում նախատեսվող արտադրական պահեստի կառուցում |
| Նախատեսվող գործունեության նպատակը | Արտադրական պահեստի կառուցում |
| Նախատեսվող գործունեության իրականացման վայրը | ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց թիվ 259/1 /նախկին Երևանյան փողոց թիվ 263 և 261/1 հասցեները միավորվել են/ հասցեում |
| ՇՄԱԳ հաշվետվության մշակող | «Լիլիթ Զուռնաչյան» ԱՁ |

## 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող արտադրական պահեստը նախատեսվում է կառուցել Քաղաքացիներ Արմեն Սուքիասյանին և Անուշ Սուքիասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց թիվ 259/1 հասցեում /նախկին Երևանյան փողոց թիվ 263 և 261/1 հասցեները միավորվել են/: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 0,248483 հա (վկայականը, ինչպես նաև միավորման որոշումը ներկայացված է Հավելվածում): Նշված տարածքում նախատեսվում է կառուցել արտադրական պահեստ, որոնց մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշետվությունում:

ներկայացվել է նախատեսվող գործունեությունը որպես քաղաքաշինական օբյեկտ /8) քաղաքաշինության բնագավառում՝

ա. քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով/:

Ներկայումս, նշված տարածքի հարևանությամբ է գտնվում նույն սեփականատիրոջը պատկանող կաթի վերամշակման արտադրամասը, հողամասի մի կողմում է գտնվում միջպետական նշանակության M3 ճանապարհը, որի հեռավորությունը նախատեսվող արտադրամասից կազմում է շուրջ 7մ, իսկ մյուս

կողմից տեղական նշանակության Յու. Գագարին փողոցը, նույն փողոցի ուղղությամբ Պուշկին փողոցի վրա էլ գտնվում է նույն սեփականատիրոջը պատկանող կաթի վերամշակման արտադրամասը:

Նախատեսվող արտադրական պահեստի հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, որի հեռավորությունը կազմում է շուրջ 6մ:

Բացի վերոնշյալ տարածքներից, որոնք գտնվում են արտադրական պահեստի հարևանությամբ, հարակից տարածքներում որևէ այլ գործունեություն չի նախատեսվում: Ծրագիրը իրականացվելու է ՀՀ օրենսդրության և այլ համապատասխան իրավական կարգավորումների համաձայն:

## 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է նոր կառուցվող արտադրական պահեստի շինարարությանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

2.1. ՀՀ ազգային օրենսդրությունը
Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ օրենք և փորձագիտական հետազոտություն (մայիս 2023թ.):

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական ոլորտը կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121(ընդունված 1994թ.),այն կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որոկի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերություններ,
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),
- «Բուսական աշխարհի մասին» (1999) օրենք,
- «Կենդանական աշխարհի մասին» օրենք (2000),
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001),
- «Հիդրոօթերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),
- «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),
- «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),
- «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002),
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),
- «Թափոնների մասին» օրենք (2004),
- «Զբոսաշրջիկների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),
- «Անտառային օրենսգիրքը» (2005),
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Հողօգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008 թ.),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում,
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում,
- ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում

աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,

- «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում,
- ՀՀ Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում գոմաղբի, թռչնաղբի պահեստավորմանը, տեղափոխմանը, վերամշակմանը, օգտագործմանը և վարակազերծմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 2107-Ն որոշում,
- Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի N 10-Ն «ՀՀՇՆ 31-04.03-2023 «Շենքեր և սենքեր անասնաբուծական թռչնաբուծական, գազանաբուծական. նախագծման նորմեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրաման,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 8-ի N 16-Ն ««Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու մասին»» հրաման:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սեյսմիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են՝

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահաջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող

պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.11.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն աշխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝ խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն)

“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

Աշխատանքների կազմակերպման ժամանակ անձնակազմի սանիտարա-համաճարակային անվտանգության խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի:

“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք /04.03.1996թ./

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

Գործունեության իրականացման ընթացքում աշխատողների և մերձակա բնակչության առողջության ապահովման խնդիրները կարգավորվում են սույն օրենքով:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքն ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը:

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների հետ կապված բոլոր խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս

օրենքի։

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Գործունեության իրականացման ընթացքում բնական բուսականության պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Վայրի կենդանիների պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասականազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Շինարարական և կենցաղային թափոնների կառավարումը պետք է իրականացվի ըստ սույն օրենքի պահանջների:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Բնապահպանական օրենսդրության կատարումը վերահսկվելու է բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի կողմից համաձայն սույն օրենքի դրույթների:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2–III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի

ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

“Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը” (հաստատվել ՀՀ նախագահի կողմից 23.10.2013թ.)

Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) նպատակաուղղված է ապահովելու Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին համահունչ:

Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ:

Այս փաստաթուղթը նաև նպատակ ունի երաշխավորել, որ ՀՀ ներգրավվելու է միջազգային կազմակերպությունների, Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ կողմից կազմակերպվող տարածաշրջանային ծրագրերին և ընդգծում է էներգետիկ ռեսուրսների և վառելիքի երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի կարևորությունը:

2.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին:

Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

| | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971) | 1993 | 1993 | Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ. | |
| 2 | Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992) | 1993 | 1992 | 1993 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 3 | Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000) | 2004 | 2000 | 2004 | |
| 4 | Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992) | 1994 | 1992 | 1993 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 5 | Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997) | 2005 | 1997 | 2002 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 6 | Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979) | 1997 | 1979 | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| 7 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքսում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.) | 1997 | 1991 | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| | «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.) | 2011 | 2003 | 2010 | |
| 8 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.) | 1997 | 1992 | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |

| | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| | Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003) | | 2003 | | |
| 9 | Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994) | 1997 | 1994 | 1997 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| 10 | Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին կոնվենցիա (Բազել, 1989) | 1999 | 1989 | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| 11 | Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985) | 1999 | 1985 | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| | Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987) | 1999 | 1987 | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| 12 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.) | 2001 | 1998 | 2001 | |
| 13 | Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998) | 2003 | 1998 | 2003 | |
| 14 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.) | 1997 | 1992 | 1996 | |
| | Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999) | | | | Վավերացման գործընթացում է |
| 15 | Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001) | 2004 | 2001 | 2003 | |
| 16 | Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976) | 2002 | 1976 | 2001 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ |
| | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000) | 2004 | 2000 | 2004 | |
| 18 | Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972) | 1993 | 1972 | 1993 | Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ. |
| 19 | Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.) | | 1994 | | |
| | Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994) | | 1994 | | |
| 20 | Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979) | 2008 | 1979 | 2008 | |

2.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը և պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

Ներկայացվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում՝ Քաղաքացիներ Արմեն և Անուշ Սուքիասյանները:

Մասնավորապես ՇՄՍԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:
- Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կայանը կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➢ Համոզվել, որ կառուցող ընկերությունները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

Կառուցող ընկերություն

Կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն" ՊՈԱԿ կողմից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և

առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն, որը տրամադրում է եզրակացություն կայանի գործարկման համար,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Ջրային տնտեսության պետական կոմիտե:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում եւ իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.

<u>Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.</u>

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,
- Հանրային առողջության բաժին,
- և այլն:

## 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախատեսվող արտադրական պահեստը նախատեսվում է կառուցել Քաղաքացիներ Արմեն Սուքիասյանին և Անուշ Սուքիասյանին ընդհանուր

համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց թիվ 259/1 հասցեում /նախկին Երևանյան փողոց թիվ 263 և 261/1 հասցեները միավորվել են/: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 0,248483 հա (վկայականը ներկայացված է Հավելվածում): Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,248483հա, նախատեսվող շինությունը հողամասում զբաղեցնելու է 1996,64քմ, ընդհանուր երկհարկանի շինությունը ներառյալ նկուղային հարկը կազմելու է 4403,28քմ մակերես:

Նշված տարածքում նախատեսվում է կառուցել արտադրական պահեստ, որի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշետվությունում:

Ներկայումս, նշված տարածքի հարևանությամբ է գտնվում նույն սեփականատիրոջը պատկանող կաթի վերամշակման արտադրամասը, հողամասի մի կողմում է գտնվում միջպետական նշանակության M3 ճանապարհը, որի հեռավորությունը նախատեսվող պահեստից կազմում է շուրջ 7մ, իսկ մյուս կողմից տեղական նշանակության Յու. Գագարին փողոցը, նույն փողոցի ուղղությամբ Պուշկին փողոցի վրա էլ գտնվում է նույն սեփականատիրոջը պատկանող կաթի վերամշակման արտադրամասը:

Համաձայն ՀՀ Լոռու մարզի Լոռի 6 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման գոտևորման նախագծի շրջանակում, հաստատվել է գոտևորման հատակագիծ, որի համաձայն կառուցապատման կարմիր գծից հեռավորությունը պետք է կազմի 3-7մ, ուստի միջպետական նշանակության M3 ճանապարհից և տեղական նշանակության փողոցից անհրաժեշտ հեռավորությունը պահպանված է, ստորև ներկայացվում է հատված գոտևորման հատակագծից՝




ԿՏՐՎԱԾՔ 1-1
2%
ԿՏՐՎԱԾՔ 2-2
ԿՏՐՎԱԾՔ 3-3
Մ 1:5 000


ԿՏՐՎԱԾՔ 1-1
2%
2%
2%
2%
500.0
3000.0000
1000.0 3000.0000
500.0
1000.0
1500.0000
6000.0000
1500.0
9000.0
3000.0
ԿՏՐՎԱԾՔ 2-2
2%
2%
2%
3000.0000
3000.0000
6000.0000
3000.0


21

Նախատեսվող արտադրական պահեստի հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, որի հեռավորությունը կազմում է շուրջ 6մ:

Տարածքը մասամբ ցանկապատված է, միայն բաց է այն հատվածը, որտեղ կառուցվելու է շինությունը, որի պատը հանդիսանալու է որպես ցանկապատ:

Տարածքում առկա է գոյություն ունեցող ենթակայան դեռևս Խորհրդային միության տարիներից, այն սպասարկվում է ՀԷՑ-ի կողմից, 400 ԿՎ հզորության տրանսֆորմատորը յուղային է՝ կահավորված յուղորսիչով: Չնայած նրան, որ ենթակայանը գտնվում է ձեռնարկողի սեփական հողատարածքում նախատեսվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շինարարության և շահագործման փուլերում ենթակայանի անվտանգության գոտին պահպանել: Բացի վերոնշյալ տարածքներից, որոնք գտնվում են արտադրական պահեստի հարևանությամբ, հարակից տարածքներում որևէ այլ գործունեություն չի նախատեսվում:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Հողատարածքի մակերեսը՝ 0.248483 և կադաստրային ծածկագիրը՝ 06-008-0224-0033:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան պատմամշակութային, բնական կամ այլ հուշարձաններ, ինչպես նաև տարածքը բավականին երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Տարածքի իրադրային սխեման, գլխավոր հատակագիծը համապատասխան կոորդինատներով ներկայացված են ստորև.

Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման

## ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



Պատկեր 2: Գլխավոր հատակագիծ



Պատկեր 3: Կոորդինատային տվյալներով քարտեզ-սխեմա

## ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

06-008-0224-0033 կադաստրային ծածկագրով հողամասի տեղադիրքի




| | |
|---|---|
| X=8440333.1541 | Y=4553806.1516 |
| X=8440325.0487 | Y=4553817.2805 |
| X=8440315.7264 | Y=4553829.8858 |
| X=8440303.8334 | Y=4553845.8400 |
| X=8440310.2666 | Y=4553850.7802 |
| X=8440313.5308 | Y=4553853.4402 |
| X=8440328.7634 | Y=4553864.6548 |
| X=8440341.9548 | Y=4553847.1031 |
| X=8440367.0515 | Y=4553863.5396 |
| X=8440375.7150 | Y=4553851.0102 |
| X=8440380.6986 | Y=4553843.9545 |
| X=8440384.3309 | Y=4553839.2301 |
| X=8440383.7476 | Y=4553838.1064 |
| X=8440357.8500 | Y=4553820.5805 |
| X=8440341.4385 | Y=4553809.4742 |
| X=8440340.3594 | Y=4553810.5778 |
| X=8440333.1541 | Y=4553806.1516 |

Ավտոկայանատեղիների տեղադիրքով քարտեզ-սխեմա՝




Համաձայն շինաշխատանքների հատակագծի շինարարական մեքենաները կայանվելու են հողատարածքի հյուսիսային կողմում: Մեքենաների անվադողերի լվացման վայրը նախատեսված է շինհրապարակի մուտքային և ելքային կետերում:
Նախատեսվում է շինաշխատանքներից առաջացած բետոնաջրերը և կեղտաջրերը հավաքել ժամանակավոր հորում տեղադրված կեղտաջրերի հեռացման տարայում (≤5 մ³): Տարայում հետերոգեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը՝ որպես շին աղբ տեղափոխել աղբավայր:
Նախատեսվել է բացառել ավտոկայանումը Երևանյան փողոցի կողմից դեպի տարածքի բակ:

# 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 4.1. Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Տաշիր քաղաքը գտնվում է Լոռու մարզում՝ Վրաստանի սահմանի մոտ: Այն գտնվում է մարզկենտրոն Վանաձորից 42 կմ, իսկ Երևանից՝ 154 կմ դեպի հյուսիս: Տեղակայված է Լոռու հարթավայրի հյուսիսային մասում՝ ծովի մակարդակից 1500 մ բարձրության վրա:

Ֆիզիկաաշխարհագրական առումով մարզը գտնվում է Հայկական լեռնաշխարհի խոշոր լեռնագրական միավոր Փոքր Կովկասի լեռնահամակարգի 8 արտաքին շարի՝ Գուգարաց, Միափորի լեռնաշղթաների և նրանց լեռնաբազուկների (Ոսկեպար, Մթնասար, Իջևան, Պայտասար, Հախում, Կենաց, Տավուշ, Խնձորուտ) վրա: Դրանցից կենտրոնական դիրք են գրավում Գուգարաց լեռները, որոնք ջրբաժան են Կուրի Դեբեդ և Աղստև վտակների միջև:

Մարզի ռելիեֆի բնորոշ գծերից են ուղղաձիգ քարափային լանջերը, սեղանաձև լեռնակատարները (հատկապես Իջևանի տարածաշրջանում), 200-600 մ խորությամբ ձորերն ու կիրճերը, խիստ մասնատված մակերևույթը (տիրապետող են 12°-ից բարձր թեքության լանջերը):

## 4.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում; Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրակեղնի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ–Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղնի 40-50 մետր խորություններ, իսկ երկրակեղնի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության

ձևափոխված ապարներ:

Պատկեր 4: Երկրկեղևի հիմնական խորքային բեկվածքները




Պատկեր 5: ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարձության կայքից: a=0.2g, մինչև 3 բալ, a= 0.3g, 3-ից 9 բալ, a=0.4g, 9 և ավելի բալ, a=0.5g, կործանարար երկրաշարժ/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ
## SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA




Կազմված է ՀՀ սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզը, որով երկրի տարածքը ստորաբաժանված է գոտիների՝ ըստ միևնույն մեծության սեյսմիկ վտանգի աստիճանի: Համաձայն այդ քարտեզի արևային կայանի համար հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում v=30 սմ/սմ$^2$ a=0.4g /գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/, որը համարժեք է 3-9 բալ երկրաշարժի ուժգնության:

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

Պատկեր 6: Սեյսմիկ գոտիների քարտեզ




Տաշիր համայնքի վարչական տարածքում արտադրական պահեստի կառուցման համար նախագծված տարածքի տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

4.3. Կլիմա և օդային ավազան

Շրջանում ներկայացված են տարբեր կլիմայական տիպեր, որը պայմանավորված է լեռնային կտրտված ռելիեֆով և բացարձակ բարձրությունների զգալի տատանվումներով: Հիմնականում տարածաշրջանի կլիման բարեխառն է՝ զով, խոնավ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով: Ձյունը տեղում է ուշ աշնանն ու պահպանվում է մինչև ապրիլ-մայիս ամիսները: Ամեն տարի ձևավորվում է կայուն ձնածածկույթ: Նկար 5-ում բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը: Ստորև աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների և ձնածածկի վերաբերյալ (ըստ մոտակա Տաշիր օդերևութաբանական կայանի տվյալների):


8410000
8415000
8420000
8425000
8430000
8435000
8440000
8445000
8450000
8455000
8460000
8465000
8470000
5
4
4
Ձորամուտ
Դաշտադեմ
ՏԱՇԻՐ
Պրիվոլնոյե

Նկար 5.

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,**

**ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

| Բնակավայրի անվանումը | | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, ˚C | Բացարձակ նվազագույն,˚C | Բացարձակ առավելագույն,˚C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 27. | Տաշիր | -4.6 | -3.7 | 0.0 | 5.9 | 10.3 | 13.7 | 16.4 | 16.1 | 12.4 | 7.6 | 2.1 | -2.3 | 6.2 | -34.1 | 34.6 |

Աղյուսակ 4 **Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը**

| Բնակավայրի անվանումը | ա/ն | ըստ ամիսների, ˚C | | | | | | | | | | | | Տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 27. Տաշիր | ա | 16.0 | 17.3 | 23.3 | 26.1 | 29.3 | 30.4 | 34.6 | 33.7 | 32.2 | 28.4 | 22.5 | 19.1 | 34.6 |
| | ն | -33.6 | -31.5 | -30.3 | -19.4 | -7.0 | -4.5 | 0.1 | -2.0 | -8.2 | -15.9 | -27.4 | -34.1 | -34.1 |

Աղյուսակ 5 **Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը**

(օդի 0˚C ջերմաստիճանի կայուն անցումը գարնանը և աշնանը)

| Բնակավայրի անվանումը | Սկիզբ | Վերջ | Տևողություն, օր |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 27. Տաշիր | 29 նոյեմբեր | 20 մարտ | 112 |

Աղյուսակ 7 **Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար**

| Ամիս | Օդի ջերմաստիճանը, ˚C (նվազագույն ջերմաչափով) | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ≤-15 | | ≤-20 | | ≤-25 | | ≤-30 | | ≤-35 | |
| | մ | ա | մ | ա | մ | ա | մ | ա | մ | ա |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| Ամիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| Տաշիր | | | | | | | | | | |
| 79.Դեկտեմբեր | 4.7 | 18 | 1.5 | 7 | 0.3 | 3 | 0.02 | 2 | | |
| 80. Հունվար | 7.8 | 25 | 2.8 | 22 | 0.7 | 10 | 0.1 | 3 | | |
| 81. Փետրվար | 6.0 | 20 | 2.6 | 16 | 0.7 | 11 | 0.05 | 2 | | |

Աղյուսակ 8 **Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար**

| Ամիս | Օդի ջերմաստիճանը, ˚C (առավելագույն ջերմաչափի տվյալներով) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ≥25 | | ≥30 | | ≥35 | | ≥40 | |
| | մ | ա | մ | ա | մ | ա | մ | ա |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Տաշիր | | | | | | | | |
| 79.Հունիս | 1.6 | 12 | 0.01 | 1 | | | | |
| 80. Հուլիս | 6.0 | 26 | 0.2 | 4 | | | | |
| 81. Օգոստոս | 8.0 | 29 | 0.5 | 10 | | | | |

Աղյուսակ 9 **Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)**

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

| Բնակավայրի անվանումը | ա.մ. / ն.մ. | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 27. Տաշիր | ա.մ. | 8.6 | 9.7 | 14.2 | 20.2 | 23.2 | 25.2 | 27.4 | 27.7 | 26.2 | 22.8 | 17.0 | 11.5 | 28.8 |
| | ն. մ. | -22.1 | -21.1 | -17.3 | -7.8 | -1.8 | 1.8 | 4.3 | 4.0 | -0.7 | -6.0 | -13.0 | -19.6 | -25.3 |

## ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 27. Տաշիր | 70 | 71 | 73 | 73 | 76 | 77 | 77 | 75 | 77 | 76 | 74 | 71 | 74 | 70 | 58 | 77 | 63 |

## ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը (միջին ամսական / օրական առավելագույն), մմ | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 27. Տաշիր | 22 | 28 | 42 | 76 | 131 | 139 | 81 | 62 | 53 | 49 | 33 | 19 | 735 | 144 | 591 |
| | 26 | 46 | 33 | 36 | 116 | 88 | 61 | 54 | 35 | 40 | 33 | 29 | 116 | | |

## ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 **Ձյան ծածկույթ** (արդիականացման ենթակա)

| Բնակավայրի անվանումը | Ձյան ծածկույթը | | | |
|---|---|---|---|---|
| | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ | Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 68. Տաշիր | 67 | 73 | 150 | 64 |

## ՔԱՄԻ

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ- արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 34.Տաշիր | հունվար | 19 | 3 | 2 | 4 | 10 | 32 | 19 | 11 | 38 | 3.2 | ՀսԱրլ | 2.4 | ՀվԱրմ | 5.1 |
| | | 2.6 | 2.0 | 2.2 | 3.0 | 4.2 | 5.1 | 4.9 | 3.3 | | | | | | |
| | ապրիլ | 35 | 10 | 4 | 5 | 8 | 16 | 7 | 15 | 37 | 2.1 | | | | |
| | | 2.7 | 2.6 | 2.3 | 2.5 | 2.9 | 4.0 | 3.4 | 2.8 | | | | | | |
| | հուլիս | 45 | 23 | 5 | 2 | 2 | 2 | 5 | 16 | 46 | 1.2 | | | | |
| | | 2.5 | 2.4 | 2.4 | 2.5 | 2.4 | 3.0 | 2.5 | 2.6 | | | | | | |
| | հոկտեմբեր | 39 | 7 | 3 | 4 | 6 | 13 | 11 | 17 | 44 | 1.5 | | | | |
| | | 2.6 | 2.2 | 2.0 | 2.1 | 2.5 | 3.6 | 3.2 | 2.7 | | | | | | |

Աղյուսակ 16 **Քամու հաշվարկային արագությունը**

| Բնակավայրի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա) | Միջին տարեկան ռեկորդային արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥15մ/վ)օրերի քանակը | Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 25 | 50 | 100 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 27. Տաշիր | 849. 1 | 1.9 | 26 | 25 | 27 | 29 |

Աղյուսակ 18 **Ուժեղ քամիներով օրերի քանակը**

| Բնակավայրի անվանումը | Ամսական միջին արժեքները, օր | | | | | | | | | | | | Տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 27.Տաշիր | 6.3 | 4.5 | 2.9 | 2.0 | 0.7 | 0.3 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.7 | 2.6 | 5.5 | 26 |

### 4.4. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դիտակետերի միջոցով: Աղբերքի և մոտակա բնակավայրերի տարածքում չկան էկոմոնիթորինգի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Ըստ ՊՈԱԿ պաշտոնական կայքէջի՝ 10-ից- 50հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ներկայացվում են ստորև, որոնց թվին է պատկանում նաև Տաշիր համայնքը:

- Փոշի՝ 0.095 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ³;
-Ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ³:

Պատկեր 7: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



## 4.5. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

| Ընկալիչ | Ժամերը | Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը | |
|---|---|---|---|
| | | $dBL_{AEQ}$ | $dBL_{AMAX}$ |
| Բնակելի և հասարակական շենքերի մոտ | 06:00-22:00 | 55 | 70 |
| | 22:00-06:00 | 45 | 60 |

Աղյուսակ 12: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով

| Աշխատանքային գործընթացի լարվածության կարգ | Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թեթև ֆիզիկական ծանրաբեռն-վածություն | միջին ֆիզիկական ծանրաբեռն-վածություն | 1 աստիճանի ծանր աշխատանքի | 2 աստիճանի ծանր աշխատանքի | 3 աստիճանի ծանր աշխատանքի |
| Թեթև աստիճանի լարվածություն | 80 | 80 | 75 | 75 | 75 |
| Միջին աստիճանի լարվածություն | 70 | 70 | 65 | 65 | 65 |
| Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն | 60 | 60 | | | |
| Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն | 50 | 50 | | | |

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները: Սակայն հայցվող տարածքում աղմուկի մակարդակները չեն գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորամտիվները և չեն ունենա բացասական ազդեցություն Տաշիր համայնքի վրա:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլդոնը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:

Էկսկավատորը աշխատելու է 4 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլդոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 3 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200կգ/քմ: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Iաղ = 23 lg mէ – 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/քմ

Iաղ = 13 lg mէ – 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/քմ

Որտեղ mէ = Km – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ$^2$,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200կգ/քմ

K=1,3 m է= 1,3 x 200=260

Լաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կկազմի`

LAտար = LAէկվ - Լաղ = 85– 18,2 = 66,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RAտ ր ըստ աղուսյակ 2 ` կազմում է միջնը 50 դԲ:

LAտար = 66,8 – 50 = 16,8 դԲ

Գլդոնի համար LAտար = LAէկվ - Լաղ = 80– 16,8 -50 = 13.2 դԲ

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8դԲ, իսկ գլդոնի 13.2 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

**Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները:

| Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով | | | |
|---|---|---|---|---|
| | Թրթռման արագացում | | Թրթռման արագություն | |
| | մ/վրկ2 .10-3 | դԲ | մ/վ .10-3 | դԲ |
| 2 | 10.0 | 80 | 0.79 | 84 |
| 4 | 11.0 | 81 | 0.45 | 79 |
| 8 | 14.0 | 83 | 0.28 | 75 |
| 16 | 28.0 | 89 | 0.28 | 75 |
| 31.5 | 56.0 | 95 | 0.28 | 75 |
| 63 | 110.0 | 101 | 0.28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0.28 | 75 |

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:

Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատանքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4.6. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3- րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Ախուրյան գետը՝ Ամասիա գյուղից հետո և Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ գետը՝ գետաբերանի հատվածում, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Մարմարիկ գետը՝ գետաբերանի հատվածում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Ջրագրական հիմնական միավորը Ձորագետ գետն է՝ իր Չերնայա, Տաշիր, Ուռուտ, Գյառ-գյառ, Մեծ-ձոր և բազմաթիվ այլ վտակներով: Գետերը պատկանում են Քուրի համակարգին և բնութագրվում են ձնա-անձրևային սնումով ու փոփոխական դեբիտով:

Դեբեդի վտակ Ձորագետի երկարությունը 67 կմ է: Սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայի լանջերից: Լեռնահարթավայրային տիպի գետ է: Վերին հոսանքում՝ Լոռվա դաշտում, ունի հարթավայրային բնույթ՝ դանդաղահոս է, ցածրադիր, երբեմն ճահճապատ ափերով և հաճախ առաջացնում է գալարներ: Միջին հոսանքում՝ Ստեփանավան քաղաքից ներքև, գետը, ընդունելով Տաշիր խոշոր վտակը, մտնում է խոր, մինչև 100-120մ խորությամբ կիրճերի մեջ: Գետահովիտը նեղանում է՝ վերածվելով կիրճի, այնուհետև նեղ ու խորը կանիոնի: Ձորագետի ջրահավաք ավազնի մակերեսը

1460 կմ$^2$ է:

Ձորագետի սնումը խառն է. 53.2%-ը կազմում են ձնաանձրևային, իսկ 46.8%-ը՝ ստորերկրյա ջրերը: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու նպատակներով:

Տաշիր գետը Ձորագետի առավել խոշոր վտակն է: Տաշիր գետը սկիզբ է առնում Վիրահայոց լեռնաշղթայի լանջերից, հոսում Լոռվա սարահարթով, թափվելով Ձորա- գետ՝ գետաբերանից 28 կմ հեռավորության վրա: Վերին հոսանքում Գարգառ վտակնընդունելուց հետո հովիտը լայնանում է, Ձորագետը միանում է Փամբակ գետին և սկզբնավորում Դեբեդ գետը:

Տարածաշրջանում է գտնվում Լոռու խորքային խմելու ջրերի հանքավայրը: Հանքավայրի խոշոր ջրատար հորիզոնը, որը սնվում է Խոնավ լեռներից, ուղղված է դեպի հարավ-արևելք և բեռնաթափվում է Տաշիր և Ձորագետ գետերի հովիտներում: Ջրատար հորիզոնը բեռնաթափվում է աղբյուրների երեք հզոր խմբերով (Նովոսելցևո՝ 505.2 լ/վրկ, Ակսյուտինի՝ 345.5 լ/վրկ, Կիզկալայի (Ախթալա)՝ 653.0 լ/վրկ պաշարներով), որոնք օգտագործվում են ջրամատակարարման նպատակով:

Բացի վերը նշված հիմնական ջրատար հորիզոնից, մակերևույթից 0.5-10 մ խորության վրա տարածված է ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հետ կապված ջրատար հորիզոն (0.5-25.0 մ հզորությամբ), որի պաշարները կազմում են 24.7 լ/վրկ «B» խմբով: Տարածված է նաև հրաբխային նստվածքների հետ կապված ջրային հորիզոն՝ 28.8 լ/վրկ ($C_1$-խմբի):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների՝ Ձորագետ գետի որակը 2-րդ դասին է պատկանում (լավ որակ), իսկ Տաշիր գետի ջրերինը՝ 3-4 դասի (միջին- անբավարար որակ)՝ պայմանավորված երկաթի, ԿՆ, ԹՔՊ, նիտրատ իոնի, ֆոսֆատ իոնի պարունակությունների գերազանցումներով:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3- րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է

վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը

«լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը Վանաձոր քաղաքիցհետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ և Մարմարիկ գետերը՝ գետաբերանի հատվածներում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:

ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):




Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը




Գծապատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.

## ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Աղյուսակ 1. Գետերի ջրի որակը 2022 թվականին

| Ջրավազանային կառավարման տարածք | Ջրային ռեսուրս | Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար) | Ջրի որակի բնութագրիչ | Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների | Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների |
|---|---|---|---|---|---|
| Հյուսիսային | Փամբակ | 0.5 կմ գյ. Խնկոյանից վերև (1) | Երկաթ, ալյումին | 3-րդ | 3-րդ |
| | | 0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2) | Կալցիում, ԸԱՄ, ԸԼԱ | 3-րդ | 4-րդ |
| | | | Նիտրատ իոն | 4-րդ | |
| | | 1 կմ ք. Վանաձորից վերև (3) | Նիտրատ իոն, ԸԼԱ, ԿՁՆ | 3-րդ | 3-րդ |
| | | 0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4) | Նիտրատ իոն, մոլիբդեն, ԸԼԱ, ԿՁՆ | 3-րդ | 5-րդ |
| | | | Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱՄ, ընդհանուր ֆոսֆոր | 4-րդ | |
| | | | Ամոնիում իոն | 5-րդ | |
| | Դեբեդ | 0.5 կմ Մարցիգետ թափման կետից ներքև (5) | Ամոնիում իոն, մանգան, ԿՁՆ | 3-րդ | 3-րդ |
| | | 0.5 կմ ք. Այրումից վերև (6) | Նիտրատ իոն | 3-րդ | 4-րդ |
| | | | Մոլիբդեն | 4-րդ | |
| | | սահմանի մոտ (7) | Երկաթ | 3-րդ | 4-րդ |
| | | | Մոլիբդեն, ԿՁՆ | 4-րդ | |
| | Ձորագետ | 0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8) | Կադմիում, վանադիում | 3-րդ | 4-րդ |
| | | | Մանգան | 4-րդ | |
| | | Գետաբերան (10) | Մանգան, ԿՁՆ | 4-րդ | 4-րդ |
| | Տաշիր | 0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11) | Ամոնիում իոն, մանգան, երկաթ | 3-րդ | 3-րդ |
| | Տաշիր | 0.5 կմ գյ. Սարատով-կայից ներքև (12) | - | 2-րդ | 2-րդ |

## Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք Մակերևութային ջրեր Քանակական մոնիթորինգ Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 20 դիտակետում: Օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերից որոշների ջրի ելքերի միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում: 2025թ. ապրիլին Հյուսիսային ՋԿՏ-ի հիդրոլոգիական դիտակետերում ջրի ելքերը հիմնականում եղել են նորմայի սահմաններում կամ նորմայից բարձր՝ կազմելով նորմաների 99-141%-ը, մայիսին և հունիսին ցածր են եղել նորմաներից՝ կազմելով մայիսին նորմաների 62-83%-ը, իսկ հունիսին՝ 59-71% -ը:

*Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.*

| Գետ | Դիտակետ | Միջին ամսական ելքեր. մ³/վ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | | | մայիս | | | հունիս | | |
| | | փաստացի | նորմա | % | փաստացի | նորմա | % | փաստացի | նորմա | % |
| Փամբակ | Թումանյան | 30.3 | 25.7 | 118 | 24.1 | 30.3 | 80 | 13.4 | 19.0 | 71 |
| Դեբեդ | Այրում | 85.6 | 69.9 | 122 | 66.1 | 82.7 | 80 | 36.2 | 60.7 | 60 |
| Ձորագետ | Գարգառ | 39.4 | 28.4 | 139 | 30.6 | 36.7 | 83 | 17.9 | 28.2 | 63 |
| Աղստև | Իջևան | 26.4 | 26.6 | 99 | 17.4 | 27.9 | 62 | 9.71 | 16.5 | 59 |
| Գետիկ | Գոշ | 15.2 | 10.8 | 141 | 8.49 | 10.6 | 80 | 3.54 | 5.47 | 65 |

Որակական մոնիթորինգ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում: Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև՝ ապրիլին և հունիսին՝«վատ» որակ (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Այրում քաղաքից վերև՝ ապրիլին և մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-դաս), սահմանի մոտ հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ ապրիլին՝«վատ» (5-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3 րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Սարատովկա գյուղից ներքև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Մարց գետի ջրի որակը գետաբերանում ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գարգառ գետի ջրի որակը գետաբերանում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Շնող գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ապրիլին և հունիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Գծապատկեր 41. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաները




Գծապատկեր 42. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաները




Գծապատկեր 43. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաները

***<u>Ստորերկրյա ջրեր</u>***

***Քանակական մոնիթորինգ***

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվում է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվում են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

Ապրիլ-մայիս ամիսների ընթացքում N2058 դիտակետում ջրի ծախսը նվազել է՝ 0.69լ/վ-ից՝ հասնելով 0.51 լ/վ: N2059 դիտակետում դիտվել է ջրի ծախսի կայունացում՝ 0.20լ/վ սահմաններում:




*Գծապատկեր 44. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները*

Որակական մոնիթորինգ Ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է N2058 բնաղբյուրում, որտեղ հանքայնացման, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

<u>*Մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտակետեր*</u>

| Ջրավազանային կառավարման տարածք | Համար | Ջրային ռեսուրս | Դիտակետի անվանում | Դիտակետի տեսակ | Աշխարհագրական կոորդինատներ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | լայնություն | երկայնություն |
| Հյուսիսային | 1 | Փամբակ | Շիրակամուտ | ռեժիմային | 40.8511 | 44.2350 |
| | 2 | Փամբակ | Վանաձոր | օպերատիվ | 40.8233 | 44.4635 |
| | 3 | Փամբակ | Թումանյան | օպերատիվ | 40.9373 | 44.6291 |
| | 4 | Դեբեդ | Այրում | օպերատիվ | 41.1904 | 44.8985 |
| | 5 | Լեռնաջուր | Լեռնապատ | ռեժիմային | 40.8293 | 44.3893 |
| | 6 | Տանձուտ | Վանաձոր | ռեժիմային | 40.8069 | 44.4993 |
| | 7 | Ալարեքս | Դեբեդ | օպերատիվ | 40.9187 | 44.6442 |
| | 8 | Ձորագետ | Ստեփանավան | օպերատիվ | 41.0134 | 44.3823 |
| | 9 | Ձորագետ | Գարգառ | օպերատիվ | 40.9555 | 44.5935 |
| | 10 | Տաշիր | Սարատովկա | օպերատիվ | 41.0732 | 44.3132 |
| | 11 | Գարգառ | Կուրթան | ռեժիմային | 40.9599 | 44.5517 |
| | 12 | Մարց իգետ | Թումանյան | ռեժիմային | 40.9862 | 44.6531 |
| | 13 | Աղստև | Ֆիոլետովո | ռեժիմային | 40.7172 | 44.7303 |
| | 14 | Աղստև | Դիլիջան | օպերատիվ | 40.7621 | 44.9152 |
| | 15 | Աղստև | Իջևան | օպերատիվ | 40.8784 | 45.1437 |
| | 16 | Գետիկ | Գոշ | օպերատիվ | 40.7450 | 45.0247 |
| | 17 | Պաղջուր | Գետահովիտ | օպերատիվ | 40.9023 | 45.1386 |
| | 18 | Կիրանց | Աճարկուտ | օպերատիվ | 41.0348 | 45.0829 |
| | 19 | Հախում | Ծաղկավան | օպերատիվ | 40.9359 | 45.3345 |
| | 20 | Տավուշ | Բերդ | ռեժիմային | 40.8759 | 45.3982 |

## ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Գործունեության համար նախատեսվող տարածքից շուրջ 300մ հեռավորության վրա է գտնվում Տաշիր գետը։

4.7. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության շրջանում զարգացած են մարգագետնային սևահողանման, գետահովտադարավանդային հողերը և սևահողերը։ Սևահողերում ահողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում)։ Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով։

Մարգագետնատափաստանային սևահողանման հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր։ Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ։ Կլանման տարրողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է։

Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային։ Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով Մարգագետնասևահողային հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա քաղցրահամ ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք հիմնականում գտնվում են 1.5-3.0մ խորության վրա։ Ստորին հորիզոններում պարզորոշ նկատվում են գլեացման հետքեր և երկաթի օքսիդների զգալի կուտակումներ։

**- Հողային ռեսուրսներ**

Կառուցապատման համար նախատեսված տարածքի հողերը սևահող կրազերծված կարբոնատազուրկ հողեր են, որտեղ առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում։

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում)։ Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով։ Բնորոշ է կնձկային ստրուկտուրա։ Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%)։

Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

| Հողատիպը և ենթատիպը | Խորությունը, սմ | Հումուսը, % | Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում | pH-ը ջրային քաշվածքում | Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում |
|---|---|---|---|---|---|
| Սևահողանման մարգագետնատա-փաստանային | 0-5 | 18.1 | 49.3 | 6.2 | 4.6 |
| | 5-14 | 10.8 | 49.4 | 6.7 | 8.0 |
| | 14-27 | 7.8 | 44.7 | 6.7 | 7.5 |
| | 27-40 | 5.8 | 28.6 | 6.8 | 4.6 |
| | 40-61 | 2.0 | 22.7 | 6.8 | 2.7 |
| | 61-82 | 0.8 | 21.5 | 6.9 | 1.6 |
| | 82-120 | 0.4 | 22.0 | 7.0 | 1.4 |

Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն, քանի որ տարածքում այն աղտոտող որևէ գործունեություն չի իրականացվել:

Ըստ "Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" (02.11.2017 թիվ 1404-Ն) որոշման, օգտահանված բերրի հողի պահպանման պահանջները հետևյալն են.

ա/ Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես պետք է դարսվի լայնակույտերով:

բ/ Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

դ/ Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները պետք է ամրացվեն խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:

ե/ Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:

զ/ Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում և պետք է բացառվի լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

է/ Հողի բերրի շերտը մինչ օգտահանումը չպետք է աղտոտված և աղբոտված լինի արդյունաբերական և կենցաղային թափոններով, կոշտ առարկաներով, քարերով, խճով ու շինարարական աղբով, ինչպես նաև պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին:

4.8. Կենսաբազմազանություն

4.8.1 Կենդանական և բուսական աշխարհ

Կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվել հետևյալ փուլով.

Գրասենյակային աշխատանքների փուլ

Գրասենյակային փուլում ուսումնասիրվում է տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա հրատարակված նյութերը, օրենսդրական դաշտը, կազմվում են բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցուցակները, ճշտվում է նրանց կենսամիջավայրի, կենսակերպի առանձնահատկությունները, ճշտվում է բուսատեսակների և կենդանատեսակների արտաքին նկարագրությունը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներին, բնաշխարհիկ (էնդեմիկ): Ուսումնասիրության համար հարուստ նյութ կարող են տալ քարտեզագրական նյութերը և տիեզերական լուսանկարները:

Ընդհանուր առմամբ տարածքում զարգացած է մարգագետնատափաստանային բուսականություն՝ Festuca, Phleum, Carex, Trifolium ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ (նկար 8):

Տորֆակուտակների տարածքում, լոկալ, մասնատված տեղամասերով՝ աճում է ջրաճահճային բուսականություն: Ֆլորային պարցեալային սպեկտրում գերիշխում է Asteraceae ընտանիքը, աննշան զիջում են Poaceae և Fabaceae ընտանիքի բույսերը:

Հայցվող տարածքի մակերեսը ծածկված է բուսազանգվածով, որը ներկայացված է եղեգնա-բոշխային տեսակների, շերեփուկախոտի, կյունի, ճահճախոտի, մակարդախոտի, կեռնների, դրանց չորացած և կիսափտած արմատների և ցողունների, ինչպես նաև կանաչ մամուռների խառնուրդով:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից բազմազան են հատկապես միջատները՝ ճպուռներ, ուղղաթևեր, թիթեռներ, բզեզներ:

Ըստ գրական տվյալների, կենդանական պլանկտոնը ներկայացված են Rotatoria, Cladocera և Cyclopoida տեսակներով, իսկ բենթոսը՝ Crustacea, Diptera, Odonata

տեսակներով:

Երկկենցաղներից դիտարկվել են կանաչ դոդոշը և լճագորտը, թչուններից՝ սարյակ, խաղտտտիկներ, կեռնեխ և ճնճղուկներ:

Այստեղ գրեթե ամենուր հանդիպում են եվրոպական նապաստակը (Lepus europaeus) և աղվեսը (Vulpes vulpes):

Տարածաշրջանում հանդիպում է նաև Ներկարար /Coraciformes/,

Արտաքին կառուցվածք՝

Մարմնի երկարությունը մինչև 34 սանտիմետր է, քաշը՝ 180-200 գրամ: Փետրավորումը կոշտ է, կապտականաչ, մեջքը և թևերը (վերևից)՝ ժանգադարչնագույն:

Տարածվածություն

Տարածված է Եվրոպայում, Հարավարևմտյան Ասիայում և Հյուսիսարևմտյան Աֆրիկայում: Հայաստանում հանդիպում է (ապրիլի վերջերից մինչև սեպտեմբեր) բանջարանոցներում, այգիներում և առավելապես տափաստաններում ու կիսաանապատներում՝ մինչև 2500 մետր բարձրության վրա:

Բնադրում

Ներկարարները բնադրում են փչակներում կամ դարավանդներում, գետնափոր բներում: Դնում է 4-6 սպիտակ ձու, թխսում 18-19 օր:

Սննդառություն

Սնվում է միջատներով, փոքր անողնաշարավորներով, մանր կրծողներով, ամռան վերջին՝ նաև խաղողով:

Փոքր ճագարամուկ /Allactaga elater/ կենդանատեսակները:

Արտաքին կառուցվածք՝

Մարմնի երկար, մինչև 120 մմ է, պոչինը՝ 175 մմ, կենդանի զանգվածը՝ մինչև 62 գ: Մարմնի կառուցվածքը տիպիկ է, մեջքի և կողքերի գույնը՝ բաց մոխրադեղնավուն: Պոչի վրձինը Եռագույն է՝ բաժանված սպիտակավուն, սև և սպիտակ մասերի: Բնակավայրերին մոտ տարածքներում սովորական է և քչաքանակ:

Տարածվածություն՝

Տարածված է կիսաանապատային գոտու հարթավայրերում և նախալեռներում: Գերադասում է աղասեր և օշինդրային խմբակցություններով հարուստ վայրերը:

Սննդառություն՝

Սնվում է բույսերի վերև ստորգետնյա մասերով, սերմերով, երբեմն՝ միջատներով ու նրանց թրթուրներով:

Կենսակերպ՝

Բնակվում է մինչև 3 մ երկարության և 1 մ խորության ստորգետնյա բներում: Գործունյա է մթնշաղին և գիշերը: Շարժվում է ցատկավազքով կամ քայլելով: Ձմեռային քուն է մտնում նոյեմբերից մարտ:

Բազմացում և զարգացում՝

Բազմանում է տարին 1 անգամ, ունենում 2-6 ձագ: Համաճարակաբան,

նշանակությունն աննշան է:

Տարածաշրջանում հանդիպում են՝

-Գորտնուկ երկարատերև- Ranunculus linqua L. Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակը: Կատեգորիա. EN* B 1 ab (i,ii,ii,iv)+ 2 ab (i,ii,ii,iv): Այն վտանգված տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աչելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներով:

- Ջրաշուշան սպիտակ: - Nymphaea alba L., Կատեգորիա. EN B 1 ab (iii)+ 2 ab (iii): Այն վտանգված տեսակ է, հայտնի է

Լոռու սարահարթի ռելիկտային լճերից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ կմ-ից պակաս է: Նախկինում, մինչև 1930թ աճում էր նաև Աարանի ֆլորիստիկ շրջանում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ձախափնյա ողողատներում գետի գարնանային վարարումներից առաջացած փոքրիկ լճակներում: Այստեղ տեսակը ոչնչացել է բնական և մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով՝ Մարմարիկի սակավաջրության, ժամանակավոր լճակները ցամաքելու, տնտեսական գործունեության և այլ պատճառներով: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում տնտեսական գործունեության ընդարձակման և կլիմայի գլոբալ փոփոխության պատճառով: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կրճատվող տեսակ կարգավիճակով:

-Մրգահավ- Crex crex, կարգավիճակը խոցելի տեսակ է: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում )(ver. 3.1) <<Near Threatened>> կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես Խոցելի՝ VU B1ab(iii)+2ab(iii):

Վերը նշված տեսակներն հանդիպում են տարածաշրջանում, իսկ բուն հայցվողհամար հայցվող տարածքում կենդանիների բներ, որջեր չի դիտարկվել, չկան նաև բնադրող թռչունների բներ:

-Թրաշուշան Ջավախքի /լատին՝ Gladiolus dzavakheticus/ - հիրիկազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս, որը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

Նկարագրություն

Պալարասոխուկավոր և գեղազարդային բույս է: Ցողունն ունի 40-60սմ բարձրություն: Անհավասար ջղավորությամբ տերևները 3 հատ են: Միակողմանի կանանորոշ երկկողմ ծաղկաբույլը 4-6 ծաղիկներով է, բոլոր ծաղիկները ծաղկելիս վերև են ուղղված: Ծաղկապատը անորոշ երկշուրթ է, համարյա ակտինոմորֆ և մուգ ծիրանագույն:

Տարածվածություն

Հայաստանում տարածված է Վերին Ախուրյանի (Արփի լճի ավազան, Ջավախեթի լեռնաշղթա) Շիրակի (Մեծ Մանթաշ գյուղի շրջակայք) և Լոռու (Շահնազար, Տաշիր, Ուրասար գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: Աճում է նաև Հարավարևմտյան Անդրկովկասում:

Էկոլոգիա

Աճում է ծովի մակարդակից 1400-2200 մ բարձրությունների վրա, միջին և վերին լեռնային գոտիներում, մարգագետիններում, մարգագետնատափաստանում, տնկարկներում, խոնավ, ճահճացած տեղերում: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոս ամիսներին:

Պահպանություն

Վտանգված տեսակ է և Անդրկովկասի էնդեմիկ: Տարածման շրջանի մակերեսը 5000 կմ²-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 500կմ²-ից պակաս: Աճելավայրերի փոփոխության պատճառով՝ տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ, CITES–ի և Բեռնի կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված չէ:

Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում:

Հարկ է նշել, որ Ծրագրի տարածքին հարակից հատվածում երկար ժամանակ գործունեություն է ծավալել կաթնամթերքային համալիրը, ինչը նշանակում է, որ տեղում բացակայում են Կարմիր գրքային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ

Կենդանական աշխարհի ուսումնասիրությունը կատարվել է բուսական աշխարհին զուգահեռ:

Գործունեության ենթակա տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Տարածաշրջանում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են.

թրաշուշան Ջավախքի - վտանգված տեսակ, աճում է Տաշիր քաղաքի և Ուրասար գյուղի շրջակայքում, հայցվող տարածքից 7.5կմ և 11.5կմ հեռավորության վրա,

ջրաշուշան սպիտակ- վտանգված տեսակ, հայտնի է Լոռու սարահարթի լճակներից, հայցվող տարածքին ամենամոտը գտնվում է մոտ 8կմ հարավ,

նեղտերև Դոդոնի - վտանգված տեսակ, աճում է Տաշիրի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 7.5կմ հեռավորության վրա,

զորտնուկ երկարատերև- վտանգված տեսակ է, աճում է Տաշիր քաղաքի, Սարատովկա և Նովոսելցովո գյուղերի շրջակայքում՝ գետերի աջին, խոնավ

վայրերում, հայցվող տարածքին ամենամոտ լոկալիտը գտնվում է մոտ 4կմ հեռավարության վրա:

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից հայցվող շրջանում գիտական ուսումնասիրությունների տվյալներով հայտնի են.

- նեղ խխունջ- հազվագյուտ տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 16.5կմ հեռավորության վրա,

- ճպուռ ճահճային- ծայրահեղ հազվագյուտ տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 12կմ հեռավորության վրա,

- ստեփանավանյան առվակային գնայուկ և մթնաշաղային կապտաթիթեռ

հազվագյուտ տեսակներ, հայտնի են Ստեփանավան քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 13կմ հեռավորության վրա,

- Տարգալակտուզ - անհետացող տեսակ, հայտնի է Ստեփանավանի շրջանի գերխոնավ տարածքներում, Արփի լճում, հայցվող տարածքից 16-30կմ հեռավորության վրա,

- սպիտակաաչք սուզաբադ և մոխրագույն կռունկ - քիչ տարածված տեսակներ են, հայտնի են Ստեփանավանի լճակներից, հայցվող տարածքին ամենամոտը գտնվում է մոտ 7կմ հարավ,

- բալոբան - անհետացող տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքից, հայցվող տարածքից մոտ 16կմ հեռավորության վրա:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք: Բնության պահպանվող ամենամոտ տարածքը Գյուլագարակի պետական արգելավայրն է, որը գտնվում է նախատեսվող տարածքից մոտ 22կմ հեռավորության վրա: Արգելավայրը հիմնադրվել է 1958 թվականին, զբաղեցնում է 2576 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Բազումի և Գուգարաց լեռների լանջերին, Քարհանք-ջուր գետակի հովտում, ծովի մակարդակից 1300-1850մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային սոճու անտառները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Լոռու մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները

| Հ/Հ | Անվանումը | Տեղադիրքը |
|---|---|---|
| 1 | «Բազալտանման ապարների (Դիաբազների) զոլավոր դայք» | Ալավերդի քաղաքային համայնք, Լալվար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենիհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մաղան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք |

| | | |
|---|---|---|
| 2 | «Գետնանձավ» անձավային թունել | Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա |
| 3 | «Ձորագետի հրային ներժայթուկ» | Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի–Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք |
| 4 | «Տրավերտիններ դոլերիտային բազալտներում» | Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց–Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում |
| 5 | «Թռչկան» ջրվեժ | Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա |
| 6 | «Դսեղի Ծովեր» լիճ | Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սնորդաց լեռնաշղթայի Ծովիդաշ լեռնազագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում |
| 7 | «Շամլուղի լճակ» | Շամլուղ գյուղական համայնք |
| 8 | «Օձի պորտ» | Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք |
| 9 | «Քոշաքարի մրտավարդ» | Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում |

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Լոռու մարզի բնության հուշարձաններից հայցվող տարածքին ամենամոտ գտնվողը «Գետնանձավ» անձավային թունելն է՝ նախատեսվող գործունեության տարածքից մոտ 19կմ հեռավորության վրա:

Այս հոդվածը ներկայացնում է Լոռու մարզի Տաշիր քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 55 հուշարձան (12 միավոր):

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե |
|---|---|---|
| Ամրոց | Ք.ա. 3-2 հզ | քաղաքից 1 կմ աե |
| Բերդաքաղաք | | Տաշիր կամ Կըզլկալա վայրում |
| Գյուղատեղի | | Տաշիր գետի ձախ ափին, խճուղու մոտ |
| Գյուղատեղի | | քաղաքից աե, ճանապարհի ձախ կողմում |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե |
|---|---|---|
| Գյուղատեղի | միջնադար | քաղաքից հս-աե, Տաշիր գետակի ափին |
| Եկեղեցի «Միլիտկա» | 10-12 դդ. | |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 2 հզ, 1 կես | |
| Եկեղեցի | 13-14 դդ. | Տաշիր բերդի աե կողմի ձորում, քաղաքից մոտ 1 կմ աե |
| Կամուրջ | | Տաշիրի ձորում |
| հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1961 թ. | քաղաքի մեջ |
| Ջրաղաց | | Տաշիր գետի ձորում |
| Քարայր-կացարան | | Տաշիր գետի ձորում |
| Քարայր-կացարան | | Ձորագետի ձորում |

4.11 **.** Սոցիալական և մշակութային ռեսուրսներ

## - Ենթակառուցվածքներ






***Ընդհանուր տեղեկություններ***

Աշխարհագրական դիրքը՝ Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝ ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝ Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝ 3799 քառ. կմ

Բնակչության թիվը՝ 211.5 հազար մարդ, այդ թվում՝ 6198 արցախցի

- ➢ քաղաքային 124.0. հազար մարդ,
- ➢ գյուղական 87.5 հազար մարդ,

Մարզի համայնքների թիվը՝ 11
Բնակավայրերի թիվը՝ 128

Մարզկենտրոնը ք. Վանաձոր
- ➢ Կառավարման ձևը տարածքային կառավարում

Ազգային կազմը
- ➢ հայեր 97.0 %,
- ➢ ռուսներ 1.5 %,
- ➢ հույներ 1.0 %,
- ➢ այլ ազգություններ 0.5 %:

## ԲՆԱԿՖՈՆԴ



❖ Լոռու մարզում գլխավոր հատակագիծ ունեն Ալավերդի, Ախթալա, Տաշիր, Ստեփանավան քաղաքային համայնքները, Վանաձոր համայնքի գլխավոր հատակագիծը մշակման փուլում է:

❖ Մարզի քաղաքային համայնքներում առկա է 1759 բազմաբնակարան շենք, անավարտ մնացած տարբեր աստիճանի պատրաստվածության բազմաբնակարան շենքերի քանակը 240 է, 3-րդ կարգի վթարայնություն ունեցող և ամրացման ենթակա շենքերի քանակը՝ 444: Վերելակներ գործում են Վանաձոր և Ալավերդի համայնքների բազմաբնակարան շենքերում: Նշված համայնքներում առկա է թվով 192 վերելակ, որից 136՝ սարքին, 56՝ անսարք:

## ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ



❖ 2023թ. կազմվել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխման 30 հողաշինական գործ, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

❖ 2023 ընթացքում Լոռու մարզի համայնքներում փոփոխության է ենթարկվել 27.40 հեկտար հողամասերի նպատակային նշանակություն, որի արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել 8249.97 հազ. դրամ կադաստրային արժեքների տարբերություն:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



### *ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ*

| | *(հեկտար)* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը | Վարելահողեր | Բազմամյա տնկարկներ | Խոտհարքներ | Արոտներ | Այլ հողատեսքեր |
| Լոռու մարզ | 250795.0 | 41927 | 456 | 35060 | 145591.7 | 27759.5 |

- Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրի շրջանակներում՝ ինտենսիվ այգիների հիմնման համար ծախսերի մասնակի փոխհատուցման բաղադրիչով կնքվել է «Պետական աջակցություն տրամադրելու մասին» 8 պայմանագիր՝ 14.27 հա այգեհիմնման համար: Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, փոխհատուցման բաղադրիչով ստացվել է մասնակցության 1 դիմում՝ 1.023 հա-ի համար: Կնքվել է թվով 2 պայմանագիր՝ 2.591 հա-ի համար:
- Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում՝ ներկայացվել է մասնակցության 1 հայտ և կնքվել է պայմանագիր՝ խոզաբուծության ոլորտում շուրջ 4.7 մլրդ ՀՀ դրամի չափով ներդրում կատարելու համար:
- Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ ներկայացվել է մասնակցության 2 դիմում: 2021 և 2022 թվականներին պայմանագիր կնքած 2 շահառուի տրամադրվել է 17.5 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 3-րդ մոդելի՝ շուրջ 90 գլուխ ԽԵԿ-ի համար նախատեսված «Խելացի» անասնաշենքի կառուցման 1-ին փուլով սահմանված աշխատանքների կատարման համար:
- Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ թվով 3366 շահառուի տրամադրվել է 656.3 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 7284.8 հա-ի վրա աշնանացան ցորենի ցանքս կատարելու համար:

❖ 2023թ. մարզի համայնքներում օտարվել է 198 միավոր հողամաս 56.85 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել են կադաստրային արժեքներով կամ գերազանցել են այն: 2023թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 163 431 486 ՀՀ դրամ: Օտարված 198 միավորի հողամասերը օտարվել են հողամասի կադաստրային արժեքից բարձր գնով:




❖ Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 119.86%-ը:

❖ Ընդհանուր առմամբ 2023թ. վարձակալության տրամադրման համար նախատեսնված 20693.3 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 5991.7հա 3352.4 հազ.դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 3475.8 հազ դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է 104 %:

❖ 2023թ. վարձակալության տրամադրման համար նախատեսնված 101148 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 29116.8 հա 173872.5 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 134513.9 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 77.4%:

❖ ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250795.0 հա, բնակավայրերի՝ 16536.2 հա, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 4025.1 հա, էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1675.5 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2405.6 հա, հատուկ նշանակության՝ 1217.4 հա, անտառային՝ 100603.0 հա, ջրային՝ 2606.7 հա:

Գյուղատնտեսական նշանակության՝ 250795.0 հա հողերից, որից վարելահող 41927.0 հա, բազմամյա տնկարկ 456.0 հա, խոտհարք 35060.8 հա, արոտ 145591.7 հա, այլ հողատեսք 27759.5 հա: Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն համարվող

- Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 10 հայտ 174.9 մլն դրամի չափով, կնքվել է 33 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 19.9 մլն դրամ:



- Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 4 հայտ 140.9 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 38.3 մլն դրամ:
- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ Լոռու մարզում ձեռք է բերվել 64 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 21 միավոր տրակտոր, 1 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 226.1 մլն դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 31.8 մլն դրամ:
- «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում՝ Լոռու մարզում 2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 2694 հատ ապահովագրության պայմանագիր՝ 3152 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: Ապահովագրվել են հիմնականում հացահատիկ և կարտոֆիլ մշակաբույսերը՝ կարկուտ, հրդեհի և երաշտ ռիսկերից: 2023 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 1221 ապահովագրական հատուցում՝ շուրջ 283.9 մլն դրամի չափով:




- Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում՝ ձեռք է բերվել 17 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ: Հաշվետու ժամանակահատվածում ներդրումների գումարը կազմել է 11 մլն դրամ:
- Մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականին մարզին անհատույց հատկացվել է 1694 լիտր մկնասպան թունանյութ, որը բաշխվել է մարզի համայնքներին մկնանման կրծողների դեմ քիմիական միջոցառումներ իրականացնելու համար: Ներդրման գումարը կազմել է շուրջ 10.24 մլն դրամ:
- «Լոռի» ՋՕԸ-ի կողմից ոռոգման համակարգի վերանորոգման և գարնան նախապատրաստական աշխատանքների վրա կատարվել է 50319,0 մլն դրամի ներդրում:



## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**2023թ. Լոռու մարզում գործել է.**

- ✓ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 11 միջին մասնագիտական, որից 1-ը ոչ պետական, 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ
- ✓ 74 նախադպրոցական ուսումնական հաստատություն (1-ը՝ պարապուրդում) ՝ 4443 երեխաներով:
- ✓ 164 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 13 ավագ դպրոց, 2 վարժարան և 1 մասնավոր դպրոց:

Տաշիր համայնքը գտնվում է մարզի հյուսիս արևմտյան մասում: Համայնքը հյուսիսից սահմանակից է Մեծավան համայնքին, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Սարչապետ համայնքին, արևելքից՝ Լոռի Բերդ համայնքին, հարավից՝ Ստեփանավան համայնքին, արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին: Ունի ծովի մակարդակից 1500մ բարձրություն: Համայնքով հոսում է Տաշիր գետը, որը հանդիսանում է Դեբետ գետի վտակ:Կլիման բարեխառն է, օդի հունվարյան միջին ջերմաստիճանը -4,9°C, հուլիսինը՝ 18-20 °C: Տարեկան թափվում են 420 մմ մթնոլորտային տեղումներ: Տաշիր համայնքի վարչական տարածքը 40359,04հա է, հեռավորությունը մարզկենտրոնից 52կմ է, հեռավորությունը մայրաքաղաքից 163կմ: Տաշիր համայնքով է անցնում միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստան մայրուղին: Տաշիրը մարզի երկրորդ այընտարանաքային հնարավորությունն է Վրաստանի Հանարպետություն դուրս գալու համար:

.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ-2018թ.

1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2 ) 326472

2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը 41

3. Բնակելիտների (առանձնատների) ընդհանուր թիվը 4807

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 2018թ.

1.Հողեր, ընդամենը (հա) 20458,62

2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա) 36040.95

3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա) 40359,04

4.Խոշոր եղջրավոր անասունների գլխաքանակը 8952

6. Մանր եղջրավոր անասունների (ոչխարնայծ) գլխաքանակը 1774

7. Խոզերի գլուխաքանակը 450

# 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

## 5.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող արտադրական պահեստը նախատեսվում է կառուցել Քաղաքացիներ Արմեն Սուքիասյանին և Անուշ Սուքիասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց թիվ 259/1 հասցեում /նախկին Երևանյան փողոց թիվ 263 և 261/1 հասցեները միավորվել են/: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 0,248483 հա (վկայականը ներկայացված է Հավելվածում)։ Նշված տարածքում նախատեսվում է կառուցել արտադրական պահեստ, որի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշետվությունում:

Ներկայումս, նշված տարածքի հարևանությամբ է գտնվում նույն սեփականատիրոջը պատկանող կաթի վերամշակման արտադրամասը, հողամասի մի կողմում է գտնվում միջպետական նշանակության M3 ճանապարհը, որի հեռավորությունը նախատեսվող պահեստից կազմում է շուրջ 7մ, իսկ մյուս կողմից տեղական նշանակության Յու. Գագարին փողոցը, նույն փողոցի ուղղությամբ Պուշկին փողոցի վրա էլ գտնվում է նույն սեփականատիրոջը պատկանող կաթի վերամշակման արտադրամասը:

Նախատեսվող արտադրական պահեստի հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, որի հեռավորությունը կազմում է շուրջ 6մ:

Բացի վերոնշյալ տարածքներից, որոնք գտնվում են արտադրական պահեստի հարևանությամբ, հարակից տարածքներում որևէ այլ գործունեություն չի նախատեսվում:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Հողատարածքի մակերեսը՝ 0.248483 և կադաստրային ծածկագիրը՝ 06-008-0224-0033:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան պատմամշակութային, բնական կամ այլ հուշարձաններ, ինչպես նաև տարածքը բավականին երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Շինարարության կազմակերպման համար անհրաժեշտ մեքենաների ցանկ՝

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

*Բուլդոզեր ДТ -75 ДРС 2՝ կամ համարժեք -1 հատ*
*Բարձր անցանելիություն ՝390-470 մմ, վառելանյութի min ծախս՝ 15լ- շահագործումը 1 ժամում*
*-չափերը՝ երկ.4,0մ, տեղաշարժման լայ. 1,8-2.24մ, բարձր.2.71մ*
*-առավելագույն հարմար տնտեսական և բնապահպանական առումով*
*Օդաղողային էքսկավատոր Caterpillar 432 F ՝ կամ համարժեք -1 հատ*
*-քանդման խորությունը՝ 5.7 մ, բարձման բարձրությունը՝ 3.46 մ, շերեփի տարողությունը՝ 1.0 $մ^3$*
*Ավտոկռունկ К С-55744 ՝ կամ համարժեք -1 հատ*
*Սլաքի թռիչքը՝ -max-21.0 մ, min-8.0 մ, բեռնաբարձությունը՝ 25 տ , չափերը- 6.76 x 2.5 x 3.6մ*
*Ավտոկռունկ CKD AD-28 /TATRA/ ՝ կամ համարժեք -1 հատ*
*Սլաքի թռիչքը՝ -max-31.2 մ, բեռնաբարձությունը՝ 29 տ , չափերը- 10.7 x 2.5 x 3.6մվ*
*Ինքնավար բեռնող-բեռնաթափող միջոցներով ավտոմոբիլներ*

*/ Շինարարական կազմակերպության ընտրությամբ և տեսակը, և քանակը/*

*Բեռնատար ավտոբետոնախառնիչ / Շինարարական կազմակերպության ընտրությամբ և տեսակը, և քանակը/*

*Ձեռքի էլեկտրական և մեխանիկական գործիքներ*

*/ Շինարարական կազմակերպության ընտրությամբ և տեսակը, և քանակը/*

*Ատաղձագործական, ծեփագործական և յուղաներկման գործիքներ և հարմարանքներ*
*/ Շինարարական կազմակերպության ընտրությամբ և տեսակը, և քանակը/*



## ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԱՄԲԱՐՁԻՉԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ

ԿՏՐՎԱԾՔ "1-1" ԱՌԱՆՑՔՈՎ




КС-55744-25տ Ավտոմոբիլային ամբարձիչի բեռնամբարձության գրաֆիկ




### Տեխնիկական Բնութագիր

Բեռնամբարձ մոմենտ - 80նմ
Բեռնամբարձությունը - 25տ
Սլաքի երկարությունը
- ամենամեծ - 21մ
- ամենափոքր - 8մ

Ավտոմոբիլային հենասարք - КамАЗ-53605
Շարժիչի հզորությունը-220կՎտ(300 ձիաուժ)
Ավտոմոբիլի արագությունը - 60կմ/ժ
Ամբարձիչի քաշը - 17տ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Վ. ՎԵՔԻԼՅԱՆ | | ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ /ՇԿՆ/ | |
| ՆԱԽԱԳԾՈՂ | Կ. ԵՆՈՔՅԱՆ | | | | | |
| ՍՏՈՒԳԵՑ | Ն. ՕՀԱՆՅԱՆ | | ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՏԱՇԻՐ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՎ ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՎԱՅՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՍՏՈՒԳԵՑ | Գ. ԳՈՒԼԱՆՅԱՆ | | | ԱՆ | ՇԿՆ-06 | 8 |
| | | | ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԱՄԲԱՐՁԻՉԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ | | | Æ |

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| հ/հ | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱԿԵՏԸ 2 տարի (24 ամիս) ԱՄԻՍՆԵՐԸ 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | [illegible] | 6 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | [illegible] | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | [illegible] | | | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | [illegible] | | | | | | | | 8 | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | [illegible] | | | | | | | | | | | 8 | | | | | | | | | | | | | |
| 6 | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | 4 | | | | | | | |
| 7 | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | 8 | | | | |
| 8 | [illegible] | | | | | | | | 2 | | | | 2 | | | 2 | | | | 2 | | | | | |
| 9 | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | 4 | | | |
| 10 | [illegible] | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ ԿՀԱՄԱՐՎԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 24 ԱՄԻՍ / 2 ՏԱՐԻ /:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ 18 ԱՇԽԱՏՈՂ:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Վ. ՎԵՔԻԼՅԱՆ | | ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ /ՇԿՆ/ | |
| ՆԱԽԱԳԾՈՂ | Կ. ԵՆՈՔՅԱՆ | | | | | |
| ՍՏՈՒԳԵՑ | Ն. ՕՀԱՆՅԱՆ | | ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՏԱՇԻՐ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՎ ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՎԱՅՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՍՏՈՒԳԵՑ | Գ. ԳՈՒԼԱՆՅԱՆ | | | ԱՆ | ՇԿՆ-07 | 8 |
| | | | ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | | | |

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ



5.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց 259/1 հասցեում նախատեսվում է կառուցել արտադրական պահեստ: Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,248483հա, նախատեսվող շինությունը հողամասում զբաղեցնելու է 1996,64քմ, ընդհանուր երկհարկանի շինությունը ներառյալ նկուղային հարկը կազմելու է 4403,28քմ մակերես:

Նախատեսվում է կատարել 65-70 մլն դրամի ներդրում, 18 նոր աշխատատեղերի ստեղծում, որը հնարավորություն կտա բիզնեսի զարգացման և ընդլայնման համար:

ՇՄԱԳ հաշվետվությանը կից ներկայացվող նախագիծն իրականացվել է հիմք ընդունելով սեփականության վկայականը:

Համաձայն նախագծի նախատեսվում է արտադրական պահեստ:

Կառույցը իրենից ներկայացնում է տարածական կոշտ 56,5մ x 48,4մ արտաքին չափերով, նկուղային հարկով, երկհարկանի Г-ձև կառույց:

ՀԻՄՔԵՐ ե/բ հիմնային հեծաններով և խամքարեբետոնե պատերով՝ ամրանավորմամբ, հորիզոնական ջրամեկուսացմամբ:

՛ՊԱՏԵՐ՝ կանոնավոր ձևի տուֆ քարից 30սմ հաստության շարվածք, կրող, հորիզոնական ամրանավորումով ցանցերի միջոցով:

ԾԱԾԿ ե/բ սալ և ե/բ ծածկի սալ

ԲԱՑՎԱԾՔՆԵՐ ալյումինե ապակեփաթեթով դուռ և պատուհաններ:

ՀԱՏԱԿՆԵՐ մամլոզրանիտ:

ՏԱՆԻՔ՝ ցինկապատ պրոֆիլով երկթեք տանիք փայտյա կարկասի վրա:

1. Որպես հարաբերական +/-0,00 նիշ ընդունվել է առաջին հարկի հատակի վերին նիշը, որը համապատասխանում է 1505մ բացարձակ նիշին:

2. Շիանարարական կապալառու կազմակերպությունը պարտավոր է շին. հրապարակը ապահովել հակահրդեհային և այլ անվտանգության միջոցառումներով ու սարքավորումներով:

3. Շինարարական հրապարակը անհրաժեշտ է ցանկապատել, ապահովել լուսարձակներով, նախատեսել շինանյութերի ժամանակավոր պահեստավորման ոչ հիմնական շինություններ:

4. Նախատեսել շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման կետ:

- Շինությունը պետք է ունենա կազմակերպված կենտրոնացված օդափոխանակության համակարգ,

- Շինության ներսում նախատեսված են լինելու հրշեջ ծորակներ ըստ նորմատիվային պահանջների եւ ավտոմատ հրդեհաշիջման համակարգ,

- Շինության տանիքը սենդվիճ պանելեներով է իրականացվում, պանելի տեսակն ու հաստությունն ընտրել ըստ կլիմայի և անվտանգության պահանջների:

5.3. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Նախատեսվող գործուենության շինարարական փուլի աշխատանքները տևելու են 24 ամիս: Գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հետևելով ՀՀ համապատասխան օրենսդրական կարգավորումներին:

## 6. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

6.1. <<Ոչ մի գործողություն>> այլընտրանքային տարբերակ

<<Ոչ մի գործողություն>> այլընտրանքային տարբերակը վերաբերում է այն իրավիճակին, երբ պահեստը չի կառուցվում:

Սակայն հարկ է նշել,որ ներկայումս խիստ անհարժեշտ է ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի պահպանությանն ու ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Ինչի նպատակով էլ կառուցվող արտադրական պահեստը լրացուցիչ աշխատատեղեր կբացի և պետ բյուջե կմեծացնի հարկերի քանակը:

«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակը նաև չի համարվում արդյունավետ, բացի այդ նմանատիպ գործունեությունը նպաստում է ընդհանուր առմամբ համայնքի և հատկապես Տաշիր քաղաքի զարգացմանը, ինչը նույնպես կարևոր դեր ունի:

Ներկայացված Ծրագրի «ոչ մի գործողություն» տարբերակը կխոչընդոտի նաև ներկայիս և ապագա տնտեսական զարգացմանը, կսահմանափակի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ և կխոչընդոտի սոցիալական ծառայությունների մատուցմանը՝ ներառյալ հանրային առողջությունը և աղքատության վերացումը:

Արդյունքում, <<Ոչ մի գործողություն>> տարբերակը՝ չի համարվում կենսունակ կամ ընդունելի այլընտրանքային տարբերակ առաջարկվող ծրագրին:

# 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 7.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

### 7.1.1. Օդային ավազան

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են արտադրական պահեստի կառուցման ընթացքում հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխնան ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = (K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times B \times G \times 10^6)/ 3600 \ \ (գ/վ),$$ որտեղ՝

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 0.5

K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4 / հաշվի առնելով բնական խոնավություն և ջրցանը /

K6 –ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի չափերը, 0.5

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հանվող հողագրունտի ծավալը ըստ փորձագիտական տվյալների կազմում է 2634 խ.մ., հաշվի առնելով գրունտի տեսակարար կշիռը՝

2634 մ$^3$ x 1.6 տ/մ$^3$ = 4214,4 տ:

Շինարարության ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս, որից հողային աշխատանքները՝ 220 օր:

Ժամում՝ 4214,4 տ : 220 օր : 8 ժամ/օր = 2,39տ/ժամ

Q = (0.05 x 0.02 x 1.0 x 0.5 x 0.4 x 0.5 x 0.6 x 2,39 x $10^6$)/3600 = 0.04 գ/վրկ

Ընդամենը շինարարության փուլում՝

220 օր x 8 ժամ/օր x 3600 վրկ/ժամ x 0.012 գ/վրկ : $10^6$ = 0.076 տ/տարի

<u>Վառելանյութի օգտագործումը</u>

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 90 - 110 լ/օր սահմաններում:

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

| Վառելիքի տեսակը | Նյութի անվանումը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | $NO_x$ | CH | ՑՕՄ | CO | $N_2O$ | $CO_2$ | ՊՄ |
| Դիզելային վառելիք | 42.3 | 0.243 | 8.16 | 36.4 | 0.122 | 3138 | 4.3 |

Հաշվի առնելով, որ տարածքում աշխատելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Համաձայն նախագծային գնահատման աշխատանքների ժամանակ դիզվառելիքի տարեկան ծախսը շինարարության ամբողջ ընթացքում կկազմի՝ 33.0 տ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 18-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 18: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

| Ավտոմեքենայի կատեգորիան | Վնասակար նյութը | Տեսակարար արտանետ-տումները, գ/կգ | Արտանետում-ները, գ/վրկ | Արտանետում-ները, տ/շին.ժամ |
|---|---|---|---|---|
| Մեծ | CO | 36.4 | 0.126 | 1.2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| բեռնունակության ավտոտրանսպորտ | ՑՕՄ | 8.403 | 0.03 | 0.28 |
| | $NO_x$ | 42.422 | 0.147 | 1.4 |
| | Մուր | 4.3 | 0.015 | 0.14 |

<u>Ծծմբային անհիդրիդ</u>

Ծծմբային անհիդրիդի ($SO_2$) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է $SO_2$-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2\Sigma ksb$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝33.0 տ/շին. ժամանակ:

$SO_2$ = 2 x 33 x 0.002 = 0.13 տ կամ 0.014 գ/վրկ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19. Շինարարության փուլի արտանետոմները

| N | Արտանետվող նյութի անվանումը | Արտանետումը, գ/վրկ | Արտանետումը, տ/շին.ժամ |
|---|---|---|---|
| 1 | Անօրգանական փոշի | 0.118 | 0.74 |
| 2 | Ածխածնի օքսիդ | 0.126 | 1.2 |
| 3 | Ածխաջրածիններ | 0.03 | 0.28 |
| 4 | Ազոտի երկօքսիդ | 0.147 | 1.4 |
| 5 | Մուր | 0.015 | 0.14 |
| 6 | Ծծմբային անհիդրիդ | 0.014 | 0.13 |

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները տեղայնացված են, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Դրանք նաև օրվա ընթացքում խիստ անկանոն են: Քանի որ շին հրապարակը բաց տարածք է, ապա նույնիսկ քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում ինչպես շինհրապարակում, այնպես էլ ճանապարհներին՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները ևս կրում են ժամանակավոր բնույթ:

7.1.2. Ջրային ավազան

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու նպատակների, ինչպես նաև փոշու նստեցման ջրցանի համար: Շինարարական, փուլի ընթացքում տեխնիկական և խմելու ջրի պահանջը կբավարարվի գոյություն ունեցող հարակից կաթնամթերքային համալիրի ցանցից՝ պայմանագրային

եղանակով: Շինարարության փուլում աշխատողները կօգտվեն հարակից տարածքում գոյություն ունեցող նույն սեփականատիրոջը պատկանող արտաղրամասի զուգարանից: Ջուրը շինհրապարակում կպահվի հատուկ տարողություններում:

Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 "Внутренний водопровод и канализация зданий", նորմերի:

Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Շինարարական աշխատանքային ռեժիմը – 24 ամիս, 22 օր/ամիս, օրը 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է.

$$W_{խ.տ.} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2,$$ որտեղ

n – Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 2 մարդ

N– ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 $մ^3$օր/մարդ

$T_1$ – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 330, $n_1$– բանվորների թվաքանակն է (օրական)- 18 մարդ,

$N_1$ - բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 $մ^3$օր/մարդ,

$T_2$ - աշխատանքային օրերի թիվն է - 330.

$$W_{խ.տ.} = 2 \times 0.016\ մ^3 \times 330 + 18 \times 0.025\ մ^3 \times 330 = 159{,}06\ մ^3/շին,\ 0{,}482մ^3/օր:$$

Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times Ն \times T,$$

Որտեղ՝ S – շինհրապարակի թրջվող մակերեսն է, 1500 $մ^2$,

K - ջրցանման նորման – 0.0015$մ^3$/1$մ^2$

Ն – օրական ջրցանի թավը՝ 2

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 160 օր

Այսպիսով՝

$$V_1 = 1500 \times 0.0015 \times 2 \times 160 = 720\ մ^3/շին.ժամ:$$ Միջին օրեկանը կազմում է 4,5 $մ^3$:

Ընդամենը շինարարության ընթացքում ջրապահանջը կկազմի՝ 879,06 $մ^3$/շին.ժամ,

7.1.3. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)» /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 2160կգ/տարի, որը կհավաքվի աղբամաններում:

Հողային աշխատանքների ընթացքում հանվելու է 2634 $մ^3$ հողագրունտային զանգված՝ փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող /ծածկագիրը՝ 31401100 08 99 5/, որի փափուկ մասն օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ մնացած մասն օգտագործվելու է տարածքի փոսորակների լցման և հարթեցման համար:

Շինարարական աղբը կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր: Կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են նախատեսված աղբամաններում, որից հետո համայնքային կոմունալ ծառայությունը կիրականացնի աղբի հեռացում դեպի համայնքային աղբատեղի:

Շինարարության ընթացքում շահագործվող տեխնիկաների սպասարկում տարածքում չի կատարվելու, այլ հատուկ սպասարկման վայրերում, ուստի շինարարության ընթացքում շահագործվող տեխնիկաների թափոնների առաջացում չի ենթադրվում:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

M=n*m

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է շինարարության փուլում՝ 18

M=18*120= 2160կգ/տարի:

Այլ վտանգավոր թափոններ, որոնք ենթակա են լիցենզավորված որևէ կազմակերպության հանձնման, չեն առաջանալու, մնացած բոլոր առաջացման ենթակա թափոնները խմբավորված են որպես շինարարական աղբ:

7.1.4. Հողային ռեսուրսներ

Հողային աշխատանքներ իրականացվելու են սկզբնական փուլում և կարճ ժամանակահատվածում: Ընդամենը հանվելու է 2634 $մ^3$ հողագրունտային զանգված: Համապատասխանաբար այդ հատվածում կվնասվի հողի արտաքին շերտը:

Բերրի հողի հանվող ծավալը գնահատվում է 185 $մ^3$, ինչն ամբողջությամբ կօգտագործվի տարածքի բարեկարգման նպատակով:

7.1.5. Կենսաբազմազանություն

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում որոշակի բացասական ազդեցության կենթարկվի տեղամասի բուսական ծածկույթը և կենդանական աշխարհը:

Ազդեցությունը իրականում աննշան է լինելու, քանի որ տարածքը շատ փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու, քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով և աչքի են ընկնում միայն որոշ

տափաստանային թփատեսակներ:

Ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքներում գտնվող բուսատեսակներն ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

Պայմանավորված կենդանիների շարժունակությամբ, կենդանական աշխարհի

ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

7.1.6. Պատմամշակութային միջավայր

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքում, ինչպես նաև դրա հարևանությամբ չեն արձանագրվել պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտներ, որոնք կարող էին որևէ կերպ ազդեցության ենթարկվել Ծրագրի իրականացման շրջանակներում:

7.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ

Նախատեսվող արտադրական պահեստի տարածքը գտնվում է արդեն իսկ գործող կաթնամթերքային համալիրի հարևանությամբ, հարակից առկա են շուրջ 6մ հեռավորության վրա բնակելի տներ, թե՛ շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ շինարարությունը կկրի ժամանակավոր բնույթ:

7.1.8. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը միջին է, քանի որ տարածքը գտնվում է Տաշիր քաղաքի սահմաններում, գործող կաթնամթերքային համալիրի հարևանությամբ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Բնապահպանական ազդեցությունները շահագործման փուլում

Շահագործման փուլում բնապահպանական ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտադրամասի շահագործման հետ:

7.2.1. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների պահպանման խնդիր չի առաջանա շահագործման փուլում, քանի որ արտադրական պահեստը հագեցած է լինելու բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգենիկ հարմրություններով և ենթակառուցվածքներով:

Անձնակազմի խմելու կենցաղային կարիքներ համար անհրաժեշտ ջրօգտագործումը նույնպես իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից, որը հանդիսանում է «Վեոլիա ջուր» ընկերության բաժանորդ և առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Արտադրական և կոմունալ-կենցաղային ջրահեռացումը նույնպես իրականացվելու է առկա հեռացման համակարգով:

7.2.2.Թափոնների կառավարում

Շահագործման ընթացքում կառաջանա Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի, տարեկան մինչև 2160կգ/տ, որը կտեղափոխվի համայնքային

աղբավայր:

«Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)», դասիչ՝ 91200400 01 00 4:

Առաջացող թափոնների քանակները հաշվարկային են, և կարող են փոփոխվել, թափոնների փաստացի քանակները կարելի կլինի որոշել արտադրական պահեստի շահագործման ընթացքում՝ փաստացի տվյալների հիման վրա: Տվյալների վերլուծության հիման վրա կկազմվի թափոնի անձնագիր և կներկայացվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն համաձայնեցման:

7.2.4. Հողային ռեսուրսներ

Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները:

7.2.5. Կենսաբազմազանություն

<u>Բուսական աշխարհ</u>

Տարածքի մի մասում բուսականությունը կվնասվի շինարարական աշխատանքների ժամանակ: Արտադրական պահեստի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն ներառվի և բուսականությանը վնաս չի նախատեսվում:

<u>Կենդանական աշխարհ</u>

Ներկայացված տարածքի զարգացումը շոշափելի վնաս չի հասցնի այստեղ ապրող կենդանատեսակներին:

Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

7.2.6. Աղմուկ

Ազդեցությունը մերձակա բնակավայրերի վրա գնահատվում է որպես թույլ: Որոշակի աղմուկի ավելացում կնկատվի արտադրական պահեստի շինարարության ընթացքում, սակայն այն կլինի ոչ էական և հատուկ միջոցառումների կարիք չկա:

## 8. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել է իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել տարեկան 200 000 ՀՀ դրամ:

## 9. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցումը և քննարկումները կազմակերպվել և իրականացվել են ՀՀ կառավարության N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում՝ համայնքի ղեկավարի նստավայրում: Հանրային ծանուցման և քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (հանրային ծանուցծման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է <<Առավոտ>> օրաթերթում, որը կցվում է) և համայնքը (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ):

Հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է ավագանու որոշմամբ նախնական համաձայնություն, որը ներկայացվում է սույն ՇՄԱԳ հաշվետվությանը կից:

Վերը ներկայացվածի հիմնավորող փաստաթղթերը կցված են սույն ՇՄԱԳ-ի փաթեթին: Հանդիպման նկարները ներառված է ՇՄԱԳ-ի փաթեթում՝ սույն հաշվետվությանը կից, էլեկտրոնային կրիչով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| Հնարավոր բացասական ազդեցություն | Մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու կազմակերպություն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն/պատասխանատու | Մեղմացնող միջոցառումների ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ | | | | | |
| Օդային ավազան | - պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար.<br>- խուսափել շարժիչների անգործությունից.<br>- միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները.<br>- շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվել գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության.<br>ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս՝ փոշեառաջացման և կանխարգելման և փոշենստեցման նպատակով,<br>-«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված միջոցառումներ | Կապալառու | Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիության | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Ջրային ռեսուրսներ | - գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար ապահովել խմելու ջուր՝ շշերով կամ գործող համալիրի համապատասխան վայրում,<br>- ապահովել աշխատողների սանիտարա-հիգենիկ պայմանները գործող համալիրի համապատսխան տարածքներում<br>- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի | Կապալառու | Շին.աշխատանքների ժամանակ՝ ըստ պահանջարկի | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | - ջուր, պահանջը կբավարարվի գոյություն ունեցող հարակից կաթնամթերքային համալիրի ցանցից՝ պայմանագրային եղանակով: Ճանապարհների ջրցանն իրականացվելու է սահմանված կարգով՝ ըստ անհրաժեշտության<br>- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով<br>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում<br>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի:<br><br>Կեղտաջրեր<br>- շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացումը կազմակերպել տեղում առկա ենթակառուցվածքների միջոցով: | | | | |
| Հողային ռեսուրսներ | - գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,<br>-շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,<br>-ավելցուկային գրունտ չի առաջանա,<br>- հանված հողային զանգվածը կօգտագործվի հետլիցքի և տարածքի բարեկարգման համար: | Կապալառու | Աշխատանքները սկսելուն պես հողային աշխա-տանքների ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ազդեցություն կենսաբազմազանության վրա | - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները<br>- պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան<br>- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: | Կապալառու | Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխա-տանքների ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | ընթացիկ ծախսեր |
| Թափոնների առաջացում և կառավարում | - շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրերում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով<br>- կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում աղբավայրերում՝ համայնքի հետ համաձայնեցված<br>- կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղափոխումը իրականացնել հստակ սահմանված երթուղով՝ համայնքի հետ նախապես համաձայնեցված<br>- արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօթյա այրումը<br>- շինանյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից | Կապալառու | Շին.աշխատան քների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աղմուկ և թրթռում | Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.<br>- աղմկոտ աշխատանքներն իրականացնել ցերեկվա ժամերին,<br>- մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել | Կապալառու | Շին. աշխատանքներ ի մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | ընթացիկ ծախսեր |
| Պատմամշակութային գտածոների հայտնաբերում | - պատահական գտածոների հայտնաբերման դեպքում անհապաղ դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել համապատասխան մարմիններին (ԿԳՄՍ) | Կապալառու | - | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |
| Առողջական խնդիրներ, պատահարներ շինարարական հրապարակում | աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները.<br>- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահոված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,<br>- ապահովել, որ բանվորները անվտանգության վերապատրաստում անցնեն<br>- ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,<br>- ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,<br>- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,<br>- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում: | Կապալառու | - | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արտակարգ իրավիճակներ | Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.<br>- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով,<br>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,<br>- շինարարակիան նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: | Կապալառու | Գործունեության ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |
| Սոցիալական | -Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 18 մարդու համար: | Կապալառու | Գործունեության ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |
| Բարեկարգում | -շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդ թափոններից և բերվելու է հնարավորինս բարեկարգ տեսքի,<br>-շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից,<br>-կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,<br>- նախատեսվում է տարածքի կանաչապատում: | Կապալառու | Գործունեության ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |
| ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Օդային ավազան | Գազի այրման հնարավոր արտանոտումներ | ՇԿ (Շահագործող կազմակերպություն) | Շահագործման ընթացքում՝ ըստ | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | խոսափելու համար անհրաժեշտ է.<br>- անհրաժեշտության դեպքում (կազմակերպել տարածքի օդային ավազանի մոնիթորինգ, չափելով փոշու, մեթանի, ածխածնի և ազոտիօքսիդների պարունակությունը<br>- պարբերաբար ստուգել կայանի աշխատանքը: | | անհրաժեշտության | | |
| Ջրային ռեսուրսներ | Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում: Աշխատողների համար խմելու ջուրը հասանելի կլինի արտադրական համալիրի համապատասխան վայրերում: | - | - | - | - |
| Թափոնների կառավարում | -կենցաղային աղբը հավաքվել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ: | ՇԿ (Շահագործող կազմակերպություն) | Շահագործման ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արտակարգ Իրավիճակներ | - արտադրական համալիրը ապահովվելու է ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով և կրակմարիչներով, ինչպես նաև առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,<br>- պարբերաբար ստուգելու է աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,<br>- տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ` ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարհանմանը:<br>- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատվելու են էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովվելու է վտանգավոր տարածքից մարդկանց տարհանումը: | ՇԿ (Շահագործող կազմակերպություն) | Շահագործման ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |
| Աղմուկ և թրթռում | Շահագործման ընթացքում աղմուկի և թրթռման ազդեցություններ նախատեսված չեն: | - | - | - | - |
| Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն | Մարդու առողջության, աշխատանքի կազմակերպման և անվտանգության հարցերը կազմակերպվելու են և իրականացվեն համապատասխան ՀՀ օրենսդրության պահանջների, | ՇԿ (Շահագործող կազմակերպություն) | Շահագործման ընթացքում | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |
| Սոցիալական | -բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,<br>-աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ | ՇԿ (Շահագործող կազմակերպություն) | - | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,<br>- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով: | | | | |
| Բարեկարգում և կանաչապատում | -բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,<br>-հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,<br>-գործունեության տարածքը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը՝ տարածքի վերականգնման նպատակով, | ՇԿ (Շահագործող կազմակերպություն) | - | Քաղաքացի Արմեն և Անուշ Սուքիասյաններ | - |

Մշտադիտարկման միջոցառումները

| Որ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի | Ինչու պետք է այդ պարամետրը մոնիթորինգի ենթարկվի | Որտեղ պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի | Երբ կամ ինչ հաճախականու-թյամբ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի | Ինչպես պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի | Մոնիթորինգի արժեքը | Ով է պատասխանատու մոնիթորինգի համար |
|---|---|---|---|---|---|---|
| Շինարարական նյութերի որակը | Հավաստիանալ շինարական նյութերի հուսալիության և մարդկանց առողջության համար դրանց անվտանգ լինելու մեջ | Մատակարարի գրասենյակում կամ պահեստում | Մատակարարման պայմանագրի ուսումնասիրման ընթացքում | Փաստաթղթերի ստուգում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում | - Սահմանափակել արտանետումներից հողի և օդի աղտոտումը, - Սահմանափակել վիբրացիայի և աղմուկի հետևանքով հանրությանը հասցվող անհանգստությունը, - Նվազենել երթևեկության խափանումը Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը Խուսափել շինհրապարակում աղբի և շինարարական նյութերի մնացորդների հետևանքով հնարավոր պատահարներից Շինհրապարակում և դրա շրջակայքում էսթետիկական տեսքի պահպանման համար | -Շինհրապարակ - Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհները | Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին եւ դրանից դուրս | Շարժման ուղղությամբ շինարարական օբյեկտի հարևան ճանապարհների զննում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| Շինտեխնիկայի տեղաշարժ | - Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում յուղերով հողի և ջրի աղտոտումից | Շինարարական ճամբար և ժամանակավոր հրապարակներ | Սարքավորումների շահագործման ընթացքում | Գործունեության ստուգում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հողի էրոզիա | Էրոզիայի երևույթները կանխելու նպատկով | Նյութերի պահեստավորման տեղամաս/եր | Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում | Էրոզիայի կանխման միջոցառումների և դրանց արդյունավետության ուսումնասիրություն | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |
| Հողի աղտոտում | Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրապարակնե րում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները, | Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսումնասիրություն | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |
| | Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով | Ավտոկայանատեղ եր, մոտեցման ճանապարհներ, | Ամսեկան, շահագործման ընթացքում | Վիզուալ ուսումնասիրություն | Ներառված է շահագործման գնի մեջ | ՇԿ |
| Օդի որակ՝փոշի | Օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրապարակնե րում, ներառյալ մոտեցման ճանապարհները, | Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսումնասիրություն | Ներառված է շահագործման գնի մեջ | ՇԿ |
| Կենսաբազմազան ություն | Կենսաբազմազանության Պահպանության նպատակով | Բոլոր շինհրապարակնե րում | Տարեկան մեկ անգամ | Վիզուալ ուսումնասիրություն | | |
| Աղմուկ | Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրապարակնե րում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները, | Ըստ անհրաժեշտության | Աղմկաչափ | 32000ՀՀ դրամ | ՇԿ |
| | Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով | Ավտոկայանատեղ եր, մոտեցման ճանապարհներ, | Ըստ անհրաժեշտության | Աղմկաչափ | 32000ՀՀ դրամ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Երթևեկության անվտանգությո ւն | Երթևեկության անվտանգությունն ապահովելու համար | ՇԿ կողմից օգտագործվող բոլոր ընդհանուր ճանապարհները | Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսումնասիրություն | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կենցաղային աղբի առաջացում | Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը | Գործունեության համար նախատեսված տարածքը և դրա շրջակայքը | Պարբերաբար, շահագործման ընթացքում | Վիզուալ ուսումնասիրություն | Ներառված է շահագործման գնի մեջ | ՇԿ |
| Շինհրապարակի ռեկուլտիվացիա եւ կանաչապատում | Հողածածկի որակի և լանդշաֆտի էսթետիկ տեսքի կորստի նվազեցման նպատակով | Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շին ճամբարը, մոտեցման ճանապարհները, | Շինարարության ավարտական ժամանակահատվածում | Վիզուալ ստուգում | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ |
| Աշխատողների առողջություն և անվտանգություն | Վնասվածքների եւ վթարների հավանականությունը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրապարակներում | Շինարարական աշխատանքների ամբողջ ընթցքում | Գործունեության զննում, արձանագրությունների և հաշվետվությունների ստուգում | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ |
| Պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին | Նվազեցնել շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ռիսկերը | Բոլոր շինհրապարակներում | Շինարարության ամբողջ ընթացքում | Պարբերական ստուգումներ | Ներառված է շինարարության գնի մեջ | ՇԿ |
| Հասարակության իրազեկվածություն | Նվազեցնել շինհրապարակին մոտ գտնվող բնակավայրերի վրա ազդեցության | Տեղական համայնքների գրասենյակներ | Նախքան շինարարական աշխատնքները | Ծանուցման փաստաթղթերի ստուգում Հարցազրույցներ շինհրապարակի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչների հետ | Ներառված է շահագործման գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հանրային առողջություն եւ անվտան-գություն | Ապահովել բնակիչների համապատասխան նախազգուշացումը | Հիմնական ճանապարհների տեսանելի մասերում, գյուղերին ու բնակավայրերին մոտ գտնվող տեղամասերի մոտ | Ամսեկան | Նախազգուշական նշանների ստուգում | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |
| Տեղական բնակչության զբաղվածու-թյուն | - Մշակել և իրականացնել աշխատողների ընդունման և աշխատավարձերի վճարման անխտրական քաղաքականություն<br>- Շինարարական աշխատանքների համար աշխատողներ ընդունելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղի բնակչությանը | Տեղական համայնքներ | Պարբերաբար, շինարարության ընթացքում | Հարցազրույցներ | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գենդերային ասպեկտներ | Ապահովել աշխատան-քային վայրում/ աշխատողների ճամբարում սեռական ոտնձգությունների բացարձակ անհանդու-ժողականություն Ուժեղացնել տարածքային իշխանությունների ներգրավվածությունը գենդերային խնդիրների հարցում (օր.՝ ստանալ բողոքներ կանանց կոմից) | - Բոլոր շինհրպարակները - Տեղական համայնքներ | Ամեն ամիս, շինարարության փուլի ընթացքում Եռամսյակային, շահագործման փուլի ընթացքում | Հարցազրույցներ կանանց հետ -Բողոքների ստուգում | Ներառված է շինարարությ ան և շահագործման գնի մեջ | ՇԿ |
| Բողոքների լուծման մեխանիզմ | Ապահովել բողոքների լուծման մեխանիզմի իրականացումը և դրա արդյունավետությունը | - Տեղական համայնքներ | Ամսական | - Բողոքների ստուգում - Հարցազրույց աշխատողների հետ - Հարցազրույցներ համայնքների ղեկավարների և բնակիչների հետ | Ներառված է շինարարությ ան և շահագործման գնի մեջ | ՇԿ |

# ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 19 փետրվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

ԱՐՄԵՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐԱՄԻ, ԱՆՈՒՇ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Լոռի, համայնք Տաշիր Տաշիր ք. Երևանյան փողոց 259/1 հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Անշարժ գույքի վաճառքի պայմանագիր 30.07.2018թ., Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 30.07.2018թ. գ/մ 1901, Համայնքի ղեկավարի 19.09.2018թ. թիվ 840-Ա որոշում, Համայնքի ավագանու 26.05.2022թ. թիվ 34-Ա որոշում Ճարտարապետահատակագծային առաջադրանք 27.05.2022թ. թիվ 36 , Ամուսնության վկայական 20.01.1998թ. թիվ ԱԱ 024670, Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 03.09.2018թ. ս/մ 2454, Քանդման թույլտվություն 01.06.2020թ. թիվ 3, Համայնքի ղեկավարի 14.11.2024թ. թիվ 1196-Ա որոշում, Միավորման դիմում 13.02.2025թ.

**ՎԿԱՅԱԿԱՆ N 19022025-06-0012, գաղտնաբառ՝ 9RMY9NWGJKRW**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 1/2

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-008-0224-0033
Մակերեսի չափը (հա)՝ 0.248483
Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀԵՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 19022025-06-0012, գաղտնաբառ՝ 9RMY9NWGJKRW**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamayn@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2025 թվականի N 152-Ա

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ, 50-րդ, 51-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 120-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0224-0025 և 06-008-0224-0031 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր Երևանյան փողոց 259/1 (փոստային դասիչ՝ 2102) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06011Y8FMUAQ:
2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. փետրվարի 10

ք.Տաշիր

Ձև N 1-2

PMB3-1577-7D28-2A65

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-9983-25 04.11.2025թ.**

Օբյեկտ **Կառուցում, արտադրական պահեստի կառուցում,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

արտադրական պահեստի կառուցում՝ երկհարկանի (նկուղային հարկով)՝ 48x56.5 (տեսքը բազմանկյունի) առանցքային չափերով

(համառոտ բնութագիրը, հզորությունը)

**նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, ռիսկայնության աստիճանը՝ IV** նախագծային փաստաթղթերի մշակման համար։

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Լոռի, համայնք՝ Տաշիր Տաշիր ք. Երևանյան փողոց 259/1 հողամաս, 06-008-0224-0033**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ԱՐՄԵՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ / 2409740375 / ԼՈՌԻ, ՏԱՇԻՐ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ., 131Տ, ԱՆՈՒՇ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ / 7801780442 / ԼՈՌԻ, ՏԱՇԻՐ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ., 131Տ**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԱՆՈՒՇ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 19022025-06-0012**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 04.11.2028թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

**Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ   Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի   Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը**
**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության<br>(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը) |
| 2. (*) Հողամասի չափսերը | 0.248483<br>(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա)) |
| 3. Հողամասի առկա վիճակը | Չկառուցապատված հողամաս<br>(շենքի-ֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն) |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | Մ-3 միջպետական և տեղական նշանակության փողոցներ<br>(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն) |

| | |
|---|---|
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | Կից տարածքում առկա են ինժեներական ենթակառուցվածքներ<br>(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ սարքավորումները) |
| 6. (*) Կից հողամասեր | Բնակելի և արտադրական հողամասեր<br>(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | Բացակայում են<br>(հուշարձանի անվանումը) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | Պահպանել հողամասի սահմանագծից հեռավորություն՝ ըստ նորմերի<br>(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

## Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն   Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | Պահպանել ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ և ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն և ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում» պահանջները:<br>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկությունները ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | 3-7 |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | Ըստ օրենսդրության նորմատիվատեխնիկական փաստաթղթերի |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | 13<br>սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հակասեյսմիկ միջոցներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) | |
| 9.7 այլ պահանջներ | |

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | Առկա չեն |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | Նկուղային հարկ, ժամանակավոր պահեստավորման համար |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի |
| 12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում | Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2 (*) էլեկտրամատակարարում | Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | Բացակայում է<br>(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | |
| 12.6. աղբահանություն | Ըստ նախագծի |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | Ըստ նախագծի<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | Բարեկարգել ճանապարհամերձ հատվածը<br>(կանաչապատման պահպանման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Տեղական նշանակության, քար, ավազ, ցեմենտ, շինփայտ, ցինկապատ թիթեղ<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | Նախատեսել արտակարգ իրավիճակներում մարդկանց պաշտպանության միջոցառումներ և էվակուացիոն ելքեր<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներներ | Նախատեսել հրդեհային անվտանգության միջոցառումներ ըստ գործող նորմերի<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ<br>(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | Նախատեսել շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և (անհրաժեշտ ժամանակավոր կահավորում, ժամանակավոր պահեստավորման տարածք և այլն) լուսավորում<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | մինչև 04.11.2028թ., նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր,<br>(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Պարզ փորձաքննություն |

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում — Ըստ պահանջի

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ — Նախատեսել հանրային քննարկում

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում — Ներկայացնել ՇՄԱԳ եզրակացություն

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հաշմանդամների ու բնության պահպանության և այլ փաստացված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտատիրոջ) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հաշմանդամների ու բնության պահպանության և այլ փաստացված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտատիրոջ) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

28. Այլ պայմաններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

04.11.2025
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեի, որը գործում է

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

հիման վրա, մի կողմից, և բաժանորդը՝

[illegible],

(ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող)

[illegible] 131,

(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը, միացման կետի հասցեն)

ի դեմս [illegible],

(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է [illegible] հիման վրա,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) **կանոններ**՝ հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

3) **առևտրային հաշվառքի սարք**՝ պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.

4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում**՝ պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

5) **հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին.

6) **տեխնիկական պայմաններ**՝ մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու, բաժանորդին մատակարարված խմելու ջուրը

3

Պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

27. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

28. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

29. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

30. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

31. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

32. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

33. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

8

## 11. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

34. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

35. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

36. Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
Հ/h 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՋ N 0001
Գլխավոր տնօրեն ____

______________________
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝ ______________________
(ստորագրություն)

______________________
(Ստորաբաժանման անվանումը)

______________________
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝ ______________________

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ ______________________

Ծանուցման հասցեն՝ ______________________

Էլ. փոստ ______________________

Հեռախոս ______________________

ՀՎՀՀ ______________________

Բանկ ______________________

Հ/h ______________________

Ղեկավար (ֆիզիկական անձ)

______________________
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)

9

Գազի պայմանագիր՝

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ

Բնական գազի մատակարարման
(Մատակարար - Բաժանորդ (կազմակերպություն))

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 035/1/145116

(պայմանագրի կնքման վայրը) «01» 11 2017 թվական

Մատակարարը (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը) ... 43

(մասնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը) ... 2/2ա

ի դեմս (պաշտոնը, անունը, ազգանունը)

որը գործում է 30.12.16 01-38/6230 (գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը) հիման վրա, մի կողմից,

և Բաժանորդը (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը)

(հասցեն, գտնվելու վայրը) ... 135

ի դեմս (պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է (գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը) հիման վրա,

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
   1) *Հանձնաժողով*՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
   2) *ԳՄՕԿ*՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և

1

յուրաքանչյուր սահմանազատման կետում սպառված բնական գազի քանակի և վճարված գումարի մասին:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

27. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:
28. Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց (որոնք բնական գազը ձեռք են բերում էլեկտրական կամ ջերմային էներգիա արտադրելու նպատակով) միջև կնքված պայմանագրերն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:
29. Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:
30. Սույն պայմանագիրը կարող է լուծվել.
    1) Կողմերի փոխհամաձայնությամբ,
    2) Բաժանորդի կողմից միակողմանի, այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և օգտագործած բնական գազի, իսկ բազմաբնակարան շենքում գտնվող Բաժանորդի դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության համար ամբողջությամբ վճարելու պայմանով,
    3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:
31. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում սույն պայմանագիրը լուծված է համարվում այն պահից, երբ Մատակարարը պայմանագրի լուծման մասին ծանուցում է Բաժանորդին:

31.1* Սույն պայմանագրում սահմանազատման նոր կետ ավելացնելը կամ բաժանորդի կողմից գործող սահմանազատման կետերից որևէ մեկից հրաժարվելը հիմք չի կարող հանդիսանալ սույն պայմանագիրը լուծելու համար:

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

32. Հավելված №1 - Համաձայնագիր սահմանազատման և առաջման կետերի մասին
33. Հավելված №2 – Համաձայնագիր սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին
34. Հավելված №3 - Համաձայնագիր բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին

8

35. Հավելված №4 - Համաձայնագիր բազմաբնակարան շենքում գտնվող գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

* 26.1, 26.2 և 31.1 կետերը լրացվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի №425Ն որոշման համաձայն:

**Մատակարար՝ Բաժանորդ՝**

| Մատակարար | Բաժանորդ |
|---|---|
| (կազմակերպության անվանումը) | (կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) |
| (պաշտոնը, անունը, ազգանունը) | (պաշտոնը, անունը, ազգանունը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| ... 2/2ա (գտնվելու վայրը / բնակության վայրը) | ... 131 |
| (0322) 2-96-93 (21) (հեռախոսահամարը) | (093) 78-01-17 (հեռախոսահամարը) |
| ...2474000052680000 (բանկի անվանումը և հաշվեհամարը) | ...220143330028 6000 (բանկի անվանումը և հաշվեհամարը) |
| [email protected] (էլեկտրոնային փոստի հասցեն) | (էլեկտրոնային փոստի հասցեն՝ անհրաժեշտության դեպքում) |
| 00046317 (հարկ վճարողի հաշվառման համարը) | 06952967 (հարկ վճարողի հաշվառման համարը) |
| | ... 131 (ծառուցման վայրը) |

Կ.Տ. Կ.Տ.

9

Հավելված №1
Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))
2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ
հաստատված պայմանագրի

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Սահմանազատման և առաքման կետերի մասին

1. Բնական գազի առաքման կետ է համարվում [illegible]

2. Բնական գազի սահմանազատման կետ է համարվում [illegible]

### Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Տեղադրման վայրը | Տեղադրման ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | BK | G-4 | 5219620 | [illegible] 131 | |
| 2. | | G25-A | 25104066 | [illegible] 83 | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |

3. Առևտրային հաշվառքի սարքը (կայանը) հանդիսանում է [illegible] սեփականությունը:

4. Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելիությունից, կրում է Մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

### Հսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Տեղադրման վայրը | Տեղադրման ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | |
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |

5. Հսկիչ հաշվառքի սարքը (կայանը) սպասարկում է դրա սեփականատերը:



| Մատակարար՝ | Բաժանորդ՝ |
|---|---|
| [illegible] | [illegible] |
| (անունը, ազգանունը, պաշտոնը) | (անունը, ազգանունը, պաշտոնը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| «01» 11 2017 թվական | «01» 11 2017 թվական |
| Կ.Տ. | Կ.Տ. |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

«ԴԵԲԵԴ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂ ՏԱՇԻՐ ԷԼՑԱՆՑԻ

Պետ Պ-ն Ս. Սուքիասյանին

«ԼՈՌՎԱ ԿԱԹ» ՍՊԸ-ի

Տնօրեն Ա. Սուքիասյանից

Ա/Ձ Արմեն Սուքիասյանը ք. Տաշիր Պուշկինի 131 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող պանրի արտադրամասը, որտեղ կազմակերպում էր կաթնամթերքի արտադրություն ժամանակավորապես դադարեցրել է աշխատանքային գործունեությունը և վարձակալությամբ տրամադրել է «ԼՈՌՎԱ ԿԱԹ» ՍՊԸ-ին կաթնամթերքի արտադրություն կազմակերպելու համար։

Խնդրում ենք կատարել անվանափոխություն։

Կից ներկայացնում ենք հիմնավորող փաստաթղթերը՝ առդիր 4 էջ։

«ԼՈՌՎԱ ԿԱԹ» ՍՊԸ տնօրեն Ս. Սուքիասյան

24.10.2017թ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կնքման վայրը՝ **ք.Տաշիր 14/09/2017թ.(տասնչորսը սեպտեմբերի երկու հազար տասնյոթ թվականի)**

**Վարձատու՝**

☑ Ֆիզիկական անձ

անուն **ԱՐՄԵՆ**

ազգանուն **ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

հաշվառման հասցե **Լոռու մարզ, ք. Տաշիր, Պուշկինի փողոց տուն 131**

անձնագրի /նույնականացման քարտի/ տվյալներ **BA2618688, տրված 15/01/2016թ. 053-ի կողմից**

(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

**Վարձակալ՝**

☑ Իրավաբանական անձ

անվանում **<<ԼՈՌՎԱ ԿԱԹ>> ԱՊԸ**

գրանցման համար **69.110.953224**

գտնվելու վայրը **ք. ՏԱշիր, Պուշկինի փողոց, 9-րդ թղմ. թիվ 187**

որի անունից ◉ կանոնադրության հիման վրա հանդես է գալիս՝

անուն **ԱՆՈՒՇ**

ազգանուն **ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

հաշվառման հասցե **Լոռու մարզ, ք. Տաշիր, Պուշկինի փողոց տուն 131**

անձնագրի /նույնականացման քարտի/ տվյալներ **AH0620939, տրված 08/08/2008թ. 039-իկողմից**

(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

Սույն պայմանագրով վարձատուն պարտավոր է նշված վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սույն պայմանագրում նշված օբյեկտը:

**Վարձակալության օբյեկտ**

☑ հողամաս **0.4 հա**

☑ շենք,շինություններ **1292.7 քմ**

(ընդհանուր մակերեսի չափը կամ մակերեսների չափերը ըստ առանձին շենք, շինությունների)

Հասցե **ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր ք. Պուշկինի փողոց, թիվ 131 արտադրամաս**

Օգտագործման նպատակային նշանակությունը **արտադրական**

Ընթացիկ վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է

◉ վարձակալը,

Հիմնական վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է

◉ վարձատուն:

Երրորդ անձին ենթավարձակալության տրամադրումը՝

◉ չի թույլատրվում առանց վարձատուի լրացուցիչ համաձայնության:

1

Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի վարձակալության օբյեկտի սեփականատերն է, օբյեկտը վաճառված կամ դատական վեճի առարկա չէ:

Վարձատուն երաշխավորում է, որ

◉ սույն պայմանագրի վարձակալության օբյեկտը վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, արգելանքի տակ չի գտնվում:

◉ Սույն պայմանագրով վարձատուն վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից **04/08/2010** թ. N **2424715** գրանցման վկայականում նշված անշարժ գույքի միավորը ամբողջությամբ:

Վարձավճար

☑ Ցուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է **20000/ հազար/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, եթե կիրառելի է:

**Ցուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է.**

◉ ընթացիկ ամսվան հաջորդող **10** օրվա ընթացքում:

**Վարձավճարը վճարվում է՝**

◉ կանխիկ.

**Հողամասի վարձակալության դեպքում հողի կադաստրային արժեքի աճի դեպքում՝**

◉ վարձավճարը չի փոփոխվում.

**Պայմանագրի ժամկետը**

◉ անորոշ ժամկետով

**Պայմանագրի ժամկետի ավարտին (կետը լրացվում է ըստ անհրաժեշտության՝ պայմանագիրը ժամկետով կնքելիս)՝**

◉ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են:

Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պայմանագրի կնքման պահին գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**Ստորագրություններ՝**

| | | |
|---|---|---|
| **Վարձատու** | Армен Сукиасян<br>**(անուն,ազգանուն)** | **(ստորագրություն)** |
| **Վարձակալ** | [illegible]<br>**(անուն,ազգանուն)** | **(ստորագրություն)** |

Սույն պայմանագիրը կողմերը ստորագրել են իմ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի **Տաշիր սպասարկման** գրասենյակի աշխատակից՝ **Էմմա Շահբազյանիս** ներկայությամբ: Նրանց (նաև ներկայացուցիչների, եթե պայմանագրի կողմ հանդես են գալիս Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքը կամ իրավաբանական անձը) անունը, ազգանունը, ինքնությունը ստուգված են:

(տարեթիվ, ստորագրություն)

Պայմանագիրը բաղկացած է 2(երկու) էջից:

2

Հոսանքի պայմանագիր՝

*Հավելված №2*
*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշման*

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Ջրառ Ծաղկ գ. Աշոցք 2017թվական
(կնքման վայրը)

Մատակարարը՝ Հայաստանի Էլեկտրական ցանցեր ՓԲԸ «Շիրակ» մասնաճյուղ, «Աշոցք» եղ. ցանց
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Ա. Սաֆրազյան եղ. ցանցի պետ լիազորագիր N ՀԷՑ 3717 16.08.2017,
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ [illegible]
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

www.ena.am 1

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. **Մատակարարը պարտավոր է՝**

1) գ. Ծաղկ, [illegible] փ., N 131
հասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.

2 www.ena.am

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի,

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ.

4. **Մատակարարն իրավունք ունի՝**

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

www.ena.am 3

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

**5. Սպառողը պարտավոր է**

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ.

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

**6. Սպառողն իրավունք ունի՝**

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:



## 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:



14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

## 4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:

17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

18. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝



1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման.

2) էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:

20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում.

2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.

3) եթե Սպառողը էլեկտրական էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.

4) էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում.

5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս էլեկտրական էներգիան սպառելու դեպքում.

6) Էլեկտրական էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:

21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում.

2) էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:

23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս էլեկտրական էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Սպառողի էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրարտեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

25. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

26. Սպառողի կողմից (բացառությամբ բնակչության) վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:

27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված №1) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:



## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

30. Եթե Սպառողի էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

31. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէնեգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

## 7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղորդվող հորդառատ անձրևներ, ձնաքքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, տեղեկացնելու, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:



35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

36. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե ԷՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:

39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

40. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:



41. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

# 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
3) Սպառողի (Ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.
4) Սպառողի (Ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.
5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
6) 0.4կՎ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:



# 12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝ ՀԷՑ փբը. «Դեբեդ» ՄՃ «Տաշիր» էլ. ցանց

Գտնվելու վայրը՝ ք. Տաշիր [illegible] 6

Հեռախոս (060) 71-15-06

Էլ. փոստ Tashir-elnet@ena.am

ՀՎՀՀ 01520882

Հ/հ

Բանկ Արդշինբանկ փբը.

Գործունեության լիցենզիա N 0082

Ա. Սաֆրազյան

(ստորագրություն, անուն, ազգանուն)

«ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «ԴԵԲԵԴ» մասնաճյուղ «ՏԱՇԻՐ» էլեկտրացանց 01520882

Կ.Տ. (առկայության դեպքում)

Սպառող՝ «Լոռվա կաթ» ՍՊԸ

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ ք. Տաշիր, Պուշկինի 131

Ծանուցման հասցեն՝ ք. Տաշիր, Պուշկինի 187.

Էլ. փոստ lorvakat@mail.ru

Հեռախոս (098) 38 11 15

ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում) 06952967

Բանկ [illegible]

Հ/հ 220143330284000

Հ. Սաֆրազյան

(ստորագրություն, անուն, ազգանուն)



*Հավելված N1*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հզորությունը 40 կՎԱ

լարումը 0,4 կվ

տեղակայված է 400 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան:

Սնումն իրականացվում է 110/35/10կվ «Տաշիր» ե/կ-ի «Դզորագետ» 1 10կվ Օգ-ի ՏԵ 6741-ի 0.4կվ [illegible]

Հաշվառքի սարքերը տեղադրված են [illegible]

Մատակարար՝ Ա. Սաֆրազյան «Տաշիր» էլ. ցանցի պետ

(անուն ազգանուն, պաշտոն)

«ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «ԴԵԲԵԴ» մասնաճյուղ «ՏԱՇԻՐ» էլեկտրացանց 01520882

(ստորագրություն)

Սպառող՝ Հ. Սաֆրազյան

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)



*Հավելված N2*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻԱԳԻԾ ՍԽԵՄԱՆ




Մատակարար՝ Ա. Սաֆրազյան «Տաշիր» էլ. ցանցի պետ

(անուն ազգանուն, պաշտոն)

«ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ «ԴԵԲԵԴ» մասնաճյուղ «ՏԱՇԻՐ» էլեկտրացանց 01520882

(ստորագրություն)

Սպառող՝ Հ. Սաֆրազյան

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

*Հավելված N3*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ (ՎԵՐՍՏՈՒԳԻՉ) ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք) | | | | | | | | | | Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | | տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | 6741 | СТЭМ-3А 9051 | 5(7) | 380 | 2-2018 | Т-0,66 200/5 №24245 | 0.5 | 40 | — | — | – | սպառող |
| 2 | | 26520508 2-2010 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |
| 12 | | | | | | | | | | | | |
| 13 | | | | | | | | | | | | |
| 14 | | | | | | | | | | | | |





| | Հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք) | | | | | | | | | | Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | | տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը | ճշտության դասը | տրանսֆորմացիայի գործակիցը | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 15 | | | | | | | | | | | | |
| 16 | | | | | | | | | | | | |
| 17 | | | | | | | | | | | | |
| 18 | | | | | | | | | | | | |
| 19 | | | | | | | | | | | | |
| 20 | | | | | | | | | | | | |
| 21 | | | | | | | | | | | | |
| 22 | | | | | | | | | | | | |
| 23 | | | | | | | | | | | | |
| 24 | | | | | | | | | | | | |
| 25 | | | | | | | | | | | | |
| 26 | | | | | | | | | | | | |
| 27 | | | | | | | | | | | | |

**Մատակարար՝**

[illegible]

(անուն, ազգանուն, պաշտոն)

[illegible]

(ստորագրություն)

01520882



**Սպառող՝**

[illegible]

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

*Հավելված N4*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ՄՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ, ԼԱՐՄԱՆ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N ը.հ. | Սնման ուղղության անվանումը | Հասցեն | Էլեկտրա-ընդունիչների կարգը (I,II,III) | Սահմանա-զատման կետի լարումը (կՎ) | Առավելագույն թույլատրելի հզորություն (կՎտ ) | Աշխատանքային օրերի և ժամերի քանակը (ժամ) | Հայտարարված առավելագույն բեռը (կՎտ) աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | 6741 | [illegible] 131 | | 0,4 | 53 | 30/24 | 53 |
| 2 | | | | | | | |
| 3 | | | | | | | |



1. Սույն աղյուսակի 6-րդ սյունակը լրացվում է համաձայն սպառողին տրված տեխնիկական պայմանների: Տեխնիկական պայմանների բացակայության դեպքում 6-րդ սյունակը լրացվում է՝

1) 0.22 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի և անվանական լարման արտադրյալով.

2) 0.4 կՎ լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման և հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով.

3) 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների համար՝ հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման, հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի և լարման չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:

2. Սույն աղյուսակի 4-րդ սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N1943Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքներին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգում նշված էլեկտրաընդունիչների կարգերի համաձայն:

Մատակարար՝ [illegible]
(անուն ազգանուն, պաշտոն)
(ստորագրություն)

Սպառող՝ [illegible]
(անուն, ազգանուն)
(ստորագրություն)



*Հավելված N5*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## Ա Կ Տ
## ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կողմերի սահմանազատման կետն է՝ լար սահմանայինը ՀԷՑ ԳՊ-ի:

2. Կողմերի էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝ լար սահմանայինը ՀԷՑ ԳՊ-ի:

3. Սպառողի և ենթասպառողի էլեկտրատեղակայանքների սահմանազատման կետն է՝ ______:

Մատակարար՝ [illegible]
(անուն ազգանուն, պաշտոն)
(ստորագրություն)

Սպառող՝ [illegible]
(անուն, ազգանուն)
(ստորագրություն)



*Հավելված N6*
*Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի*

## 0,4 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտը, որը կազմվում է համաձայն ԷՄՕԿ-ով սահմանված կարգի:

2. Երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

3. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր, որի վերաբերյալ կազմում են երկկողմանի ակտ և կցում սույն պայմանագրին:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրաէներգիայի որակը խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածը որոշվում են Մատակարարի կամ Սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, Մատակարարի և Սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրառումների հիման վրա: Այդ մասին Մատակարարը և Սպառողը կազմում են երկկողմանի ակտ:

5. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար Մատակարարը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Սպառողի (բացառությամբ բնակչության) սարքավորումները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները մատակարարի օպերատիվ ենթակայությանը հանձնելու դեպքում Կողմերը պարտավոր են այն իրականացնել ԷՄՕԿ-ով սահմանված՝ «Մատակարարի և Սպառողի (բացառությամբ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների» կարգով

7. Սպառողը պարտավոր է.

1) ապահովել փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող Մատակարարի օպերատիվ անձնակազմի շուրջօրյա անարգել մուտքը իր տնօրինության տակ գտնվող տարածքները՝ իրենց իրավասությունների սահմաններում պարտականությունների կատարման նպատակով.

2) անհապաղ հայտնել Մատակարարին նրա օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումներում և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքներում ի հայտ եկած բոլոր թերությունների և անսարքությունների մասին (060)91-15-07 հեռախոսահամարով:

8. Սպառողը պարտավոր է չգերազանցել սույն պայմանագրի N4 հավելվածով սահմանված առավելագույն թույլատրելի հզորությունը, ինչպես նաև Մատակարարի հետ համաձայնեցնել առավելագույն թույլատրելի հզորության փոփոխությունը:

9. Մատակարարը որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար պատասխանատվություն չի կրում այն ժամանակահատվածում, որի ընթացքում Սպառողը գերազանցել է առավելագույն թույլատրելի հզորությունը:

## ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԼՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԸ)

10. ____________________

11. ____________________

12. ____________________

13. ____________________

| Մատակարար՝ | Սպառող՝ |
| --- | --- |
| (անուն, ազգանուն, պաշտոն) | (անուն, ազգանուն) |
| «ՏԱՇԻՐ» էլեկտրացանց | (ստորագրություն) |
| (ստորագրություն) | |
| 01520882 | |